# Ազգ

Azg

14-20 ՄԱՐՏ 2024 ՀԻՆԳՇԱԲԹԻ 008(5790)

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ISSN: 1829-1651


## Իսրայելը 120 միլիոնի 2 արբանյակ է վաճառել Ադրբեջանին

Շվեյցարական Globes լրատվականը տեղեկացնում է, որ Իսրայելի Aerospace Industries ընկերությունը վերջերս Ադրբեջանին OptSat500 տիպի 2 արբանյակ է վաճառել՝ 120 միլիոն դոլարով: Դրանք փոխարինելու են Ադրբեջանի ունեցած արբանյակներին, որոնք նա գնել էր Airbus ընկերությունից:

Նոր արբանյակները, ըստ վաճառող ընկերության նախագահ Բոազ Լեւիի (Boaz Levy), երկարակյաց են եւ պատկերի հստակությամբ՝ անգերազանցելի:

Նախապես իսրայելական նույն ընկերությունը Բաքվին էր վաճառել Harob տիպի որոնող եւ Lora տիպի բալիստիկ հրթիռներ, որոնք օգտագործվել են, ըստ նույն լրատվամիջոցի, արցախյան վերջին՝ կարճատեւ պատերազմի օրերին: Նույն աղբյուրի համաձայն, 2022 թ.ին Իսրայելը Բաքվին վաճառել է ընդհանուր՝ 1,718 մլրդ. դոլարի զինամթերք:

*ՕՐԵՐԻ ՀԵՏ*

## Ընդունենք վերջապես. Ռուսը Անդրկովկաս եկել է չհեռանալու համար

Անկախ պետականություն ունենալու գաղափարի նկատմամբ արհամարհանքն էիր զգում, երբ արտասահմանից գալով անցնում էիր «Զվարթնոց» օդակայանի անձնագրային բաժնից, երբ, առաջին տարիներին, աշխատակիցները ոչ թե հայ, այլ՝ ռուս սահմանապահներն էին՝ նստած ապակեպատ խցիկների մեջ, իրենց կանաչ ուսադիր համազգեստներով: Դա հատկապես ազդում էր օտարերկրացիների, մանավանդ սփյուռքահայերի վրա: Հետագայում, բարեբախտաբար, փոխվեց վիճակը, երբ ռուսները փոխարինվեցին հայ եւ հայախոս աշխատակիցներով, թեեւ նույն համազգեստներով:

Հիմա, դիվանագիտությունից ոչինչ չհասկացող բռնապետիկի կարգադրությամբ, ռուսական այդ ծառայությունը օգոստոսի մեկից դուրս է գալու մեր օդակայանից, որպես սկիզբ ռուսների հետագա վռնդումների...

Իզուր չօգտագործեցի «վռնդում» բառը: Մեր բռնապետիկը, որը մեծ կարծիք ունի ինքն իր մասին, ի ցույց Արեւմուտքի իր մենտորների, միշտ հարազատ իր ֆանֆարոն գործելաոճին, այնպիսի աղմուկ-աղաղակով է դուրս հրավիրում ռուսներին, որը չես կարող չկոչել արկածախնդրություն: Մինչդեռ կարելի էր այդ ճիշտ քայլն անել դիվանագիտական նրբությամբ, առանց վիրավորելու վաղեմի դաշնակցի արժանապատվությունը, այսպես կոչված՝ «ներքին» պայմանավորվածությամբ: Ախր չէ՞ որ Մոսկվան կարող է բոլորին ցույց տալ 1992 թ.ին մեր պետության առաջարկով կնքված միջպետական պայմանագիրը ռուսական զորքը Թուրքիայի, նաեւ Իրանի հետ մեր սահմանագծի ամբողջ երկայնքին, ներառյալ դեռեւս 1921 թ.ի Կարսի պայմանագրով հաստատված Գյումրիի ռազմաբազան պահելու խնդրանքով, այն էլ՝ 45 տարով, փոխանակ 25 տարվա, որը պահանջում էր խորհրդարանական մեր ընդդիմությունը՝ Ռամկավար Ազատական կուսակցության ֆրակցիայի գլխավորությամբ, հոգ չէ թե այդ պայմանագրում խոսք չկար «Զվարթնոցի» մասին, որը մտել էր նաեւ օդային սահմանը պահելու կոնտեքստի մեջ, ներառյալ Էրեբունու կիսառազմական օդակայանը:

Հիմա, փաստորեն, մեր բռնապետիկը նախորդ օրը տված երկարաձիգ իր ասուլիսում հայտնեց, որ պատրաստվում է խնդրո առարկա դարձնել նաեւ ռազմաբազայի (արեւմտահայերը պիտի ասեին՝ ռազմախարիսխ) գոյության հարցը: Պատմություն չիմացող, մանավանդ՝ Կարսի պայմանագիր ու հետագա համաձայնագրեր չիմացող մարդու համար դա «վեշերդ հավքի, վեր կաց գնա»ի նման մի բան է: Քիչ ավելի շատ իմացողի համար՝ արեւմուտքցիների «բռավոյին» արժանանալու խնդիր: Մինչդեռ դա շատ կնճռոտ, պատմության ժապավենը ամբողջ մեկ դար հետ պտտելու արկածախնդրություն է, որը կավարտվի հայկական պետության չգոյությամբ:

Հանգստացնենք բոլորին. ռուսը երկու դար առաջ չի եկել Անդրկովկաս այսօր կամ վաղը հեռանալու համար: Երկու հարյուր տարի առաջ, երբ Ալեքսանդր Սերգեեւիչը Կազբեկի ու մեր Բազումի բարձունքներից մարտակոչի նման արձակում էր մեծապետական իր հոխորտանքը՝ «Ահա Կովկասն իմ ոտքի տակ», փաստորեն ռուս ժողովրդի ու կայսրության դեպի Արեւելք ու դեպի Անդրկովկաս մխրճվելու ազգային դոկտրինն էր արտահայտում, որին հետեւորդ է մնում, վաղն էլ հետեւորդ է մնալու Ռուսաստանը: Ով չի հասկանում սա, ոչ միայն տգետ է, այլեւ՝ կույր:

Անշուշտ Ռուսաստանն այն իդեալական դաշնակիցը չէ, որին կուզենայինք ունենալ: Նա քանիցս թերացել կամ ուշ է կատարել դաշնակցի իր պարտականությունները: Սակայն չի կարելի նրա դեմ խաղեր տալ, ինչպես արջին: Չի կարելի գերագնահատել, օրինակ, մեր բարեկամ Ֆրանսիայի հնարավորությունները ու խոստումները, վերջապես, այդ երկիրն էլ հակառակ մեզնից ստացած «ասպետական» կոչմանը, թուրքերին զիջեց, այն էլ երկու անգամ, չքնաղ մեր Կիլիկիան: Չի կարելի մեր գոյությունը վստահել մեզ բարեկամ Վաշինգտոնին, որի աշխարհաքաղաքական կշեռքի վրա, համեմատած Ադրբեջանի եւ ավելի կարեւորը՝ Թուրքիայի, մենք շատ թեթեւ ենք կշռում: Մենք, ինչպես մյուս փոքր, նույնիսկ միջին քաշի երկրները, անհրաժեշտաբար պետք ունենք պաշտպանի, եւ դա Ռուսաստանն է՝ մեր բնական դաշնակցի՝ Իրանի զգաստ հարեւանությամբ:

Բռնապետիկի ու նրա հարեմի՝ «քպ»ականների սիրած բառը՝ դիվերսիֆիկացում, կարող է վերաբերվել անհրաժեշտ զինատեսակների գնմանը, բայց ո՛չ՝ դաշնակիցներին: Չմոռանանք, որ Ադրբեջանը շարունակում է զենքի մեծագումար գնումներ անել Իսրայելից, եւ այս անգամ՝ տիեզերական տեսակի զենքերի, որոնք միայն մեզ համար չեն, այլեւ ընդդեմ Իրանի ու Ռուսաստանի: Նայենք, որ մեր երկիրը ոտնատակ չգնա:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

## Տավուշի գյուղերի հանձնումից մինչեւ ավտոբուսի հարկ

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ




Նիկոլ Փաշինյանի վերջին ասուլիսին մի անգամ եւս հայելային երեւաց մեր ողջ քաղաքական դաշտի (իշխանական եւ ընդդիմադիր) ընդհանրական պատկերը, որը հատկապես լավ է արտացոլվում լրատվամիջոցների ներկայացուցիչների հարցերի հանրագումարում: Այդ հարցերը հիմնականում քաղաքական շրջանակային անհանգստությունների եւ դրանց՝ ըստ նշանակության գործածման ծիրում էին: Հավանաբար՝ վարչապետի ասուլիսին ըստ առկա քաղաքական պատկանելության գծագրության լրատվամիջոցների հրավիրման մեջ այդպիսի պլան կա (եւ միշտ եղել է)՝ այնպես անել, որ քիչ երեւա կամ առհասարակ չերեւա Հայաստանի՝ դեֆակտո աշխարհաքաղաքական խաղալիք դարձած լինելը, նրա ղեկավարի՝ մեծ պետությունների պարտադրանքների նշագծից դուրս գալ չկարողանալը, ակամա բացելով այդպիսով նաեւ մեր քաղաքական դաշտի համար գծված կարմիր գծերը՝ դրսեւորվել ոչ թե երկիրն օրհասական վիճակից դուրս բերելու, այլ իշխանության ձգտելու ելեւէջներում, առանձնապես չինչեցնելով այն գլխավոր հարցերը, որոնք կմերկացնեին մեր գլխին կոտրվող միջազգային ծրագրերի կործանաբերությունը Հայաստան պետության համար:

Այսինքն՝ քաղաքական դաշտի իշխանական եւ ընդդիմադիր հատվածի՝ տարիներով եւ իրադարձություններով փաստված, իրենց բեւեռներից դուրս այլ ուժերին ոչնչացնող փայտերերի, իշխանության համար պայքարի մենաշնորհյալների առկա ձեւաչափը տեղափոխվել էր ասուլիս: Իշխանական եւ ընդդիմադիր շրջանակներ ներկայացնողների հարցերն էլ օգնում էին ներկայումս տարվող քաղաքականության՝ միջազգայնորեն թույլատրելի սահմանները չխախտելուն, պետության եւ պետականության հերն էլ անիծած: Ողբալի է, ողջ ժողովրդով մնացել ենք անցյալի ու ներկայի կորիֆեյների բերմուդյան եռանկյունում, որի ջրապտույտները խժռում են երկրում բոլոր մնացած մտահոգ ուժերին, անհատներին, շրջանակներին, ամայացրել եւ ամայացնում են դաշտը՝ նորից ու նորից, ներկա իշխանություն-Սերժ Սարգսյան-Ռոբերտ Քոչարյան եռաչափ օբյեկտից դուրս այլընտրանք չթողնելով, որի ներսում են միայն թույլատրելի բոլոր տեսակի շարժերը, փոխատեղումներն ու տեղափոխությունները, եւ սա հիանալի երեւաց մամուլի ողջ ասուլիսին հնչած ե՛ւ հարցերում, ե՛ւ պատասխաններում, փաստելով, որ տարվող քաղաքականության պատասխանատուն, իշխանությանը հավասար, նաեւ եռանկյունու մյուս երկու անկյուններն են:

⇨2

## Գերմանացի գիտնականները Արցախի մշակութային ժառանգության պահպանման հարցում անդրդվելի են

*Քաղաքական, պետական կառույցները՝ Բաքվի սպառնալիքներին տուրք են տալիս*

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

**Գերմանիա**

Ինչպես ծանուցել էինք «**Ազգ**»-ի նախորդ համարում, մարտի 6-ին Բեռլինում «Արցախի մշակութային ժառանգությունը» գրքի շնորհանդեսն ու դրա վտանգված լինելու պատճառները վեր հանող քննարկումը ադրբեջանական ճնշման եւ սպառնալիքների պատճառով միայն հեռավար zoom տարբերակով անցկացվեց: Առցանց «**Ազգ**»-ում նույն օրը՝ մարտի 6-ի ուշ երեկոյան, երբ ավարտվեց zoom միջոցառումը, ծանուցեցինք դրա մասին՝ շեշտելով կարեւորը, որ ի հեճուկս Ադրբեջանի ֆաշիստական հարձակման, այն անցկացվեց՝ առանց **բովանդակային** ձեւափոխման: Մեր նախորդ հրապարակման մեջ նկատել ենք, որ անընդունելի է, որ Բեռլինում Բաքուն Արցախ բառը շրջանառողների հանդեպ է արդեն վախի մթնոլորտ ստեղծում, իսկ հայերիս անվտանգությունը դժվարանում են ապահովել նույնիսկ գիտական բանավեճի ժամանակ: Սակայն ընկալելի չէ, որ հայկական ԶԼՄ-ները մինչ մարտի 12-ը շրջանառում էին թերի մի վերնագիր՝ «Գրքի շնորհանդեսը չի կայացել՝ Ադրբեջանի ճնշումների պատճառով»: Հիշեցնենք՝ միջոցառման կազմակերպիչները՝ Կոնրադ Ադենաուեր հիմնադրամը եւ Գերմանիայի արտաքին քաղաքականության ընկերակցությունը (ԳԱՔԸ) օրեր ի վեր ադրբեջանական սպառնալից նամակների ճնշմամբ, միջոցառման մասնակիցների անվտանգության նկատառումներից ելնելով, իրավիճակը սրելու արկածախնդրությունից հրաժարվել էին, առաջարկելով Արցախի ժառանգության պահպանման մասին ժամը 18.30-20 նախատեսված միջոցառումը միայն առցանց անցկացնել: Թեեւ ԳԱՔԸ-ի շենքի առջեւ ադրբեջանցիների նախօրոք հայտարարված հանրահավաքը պիտի հսկեր դաշնային ոստիկանությունը, որ սովորաբար իր պարտականության մեջ չի թերանում, սակայն վերջինս միջոցառման մասնակիցների անվտանգությունը պաշտպանել չէր երաշխավորել, քանի որ այն որակել էր մասնավոր՝ ԳԱՔԸ -ի միջոցառում:

Նույն օրը՝ մարտի 6-ին ադրբեջանական լկտի վարքագծի վրա X-ի հարթակում ուշադրություն բեւեռեց Մարդու իրավունքների միջազգային ընկերակցությունը (IGFM): ԳԴՀ գյուղնախարար **Ջեմ Էօզդեմիրն** անմիջապես արձագանքեց դրան: « Անշուշտ, ինքնըստինքյան պետք է որ հնարավոր լիներ ԼՂ վտանգված մշակութային ժառանգության պաշտպանության վերաբերյալ միջոցառումը տեղում ներկաների մասնակցությամբ անցկացնելը: Այն հանգամանքը, որ ավտոկրատների սպառնալիքներն այստեղ խանգարեցին դա իրականացնել, պիտի ցնցող լինի: Ոչ միայն, այլեւ՝ Գերմանիայի պատասխանատվությունից ելնելով»: Առայժմ որեւէ գերմանացի քաղաքական գործիչ, կամ՝ պաշտոնյա ԳԴՀ գյուղնախարարի օրինակին չի հետեւել, չի արձագանքել: Չի հիշում նաեւ այդ պատմական պատասխանատվության մասին:

⇨2

⇨1 Գլխավորը բոլորիս պարզ եղավ. Հայաստանի ոսկեգույն մուլյաժը, որ անվերջ ցույց էր տալիս Փաշինյանը, չէր ներառում անցած դարի իննսունականներին Հայաստանի անվտանգության առումով սպառնալիք հանդիսացող այն տարածքները, որոնցից ադրբեջանցիք գնդակոծում էին մեր բնակավայրերը, ճանապարհները, արոտավայրերը, թույլ չտալով օգտագործել դրանք, ու մեր բազմաթիվ զավակների կյանքի ու արյան գնով դրանք վերցվեցին, որ մեր անվտանգությունն ապահովվի: Ամենայն հավանականությամբ՝ դրանք վերադարձվելու են, Հայաստանի համար սահմանային անվտանգության տեսակետից ստեղծելով նորից անցած իննսունականների խոցելի վիճակը:

Պետությամբ, պետականությամբ, սահմանային անվտանգությամբ մտահոգ որեւէ ղեկավար դա չի կարող անել եւ չպետք է անի, եթե անելու է, ուրեմն պատանդ է տարածաշրջանային թելադրողների ձեռքին, որոնք, բնականաբար, հետապնդում են իրե՛նց, եւ ոչ թե Հայաստանի շահերը (Հայաստանը ԵՄ անդամության թեկնածու դարձնելու խոստումով չխաբվենք): Հստակ պետք է ասենք Արեւմուտքին, որ դա անկարելի է: Արեւմուտքին պետք է Հայաստանի շահերի հաշվին, մեր տարածքներն Ադբեջանին հանձնելու հաշվին այս տարածաշրջանում ունենալ հարաբերական խաղաղություն, գործարկել իրենց հարկավոր ճանապարհները՝ դուրս մղելով Ռուսաստանին, Իրանին: Ռուսաստանին ու Իրանին (տարբեր գործիքների կիրառմամբ իհարկե) հակառակը, պետք է թույլ չտալ Արեւմուտքի (Թուրքիայի) ազդեցության մեծացումը, Ռուսաստանի դեպքում՝ անգամ պատերազմի հրահրմամբ Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ: Իրանն էլ կարող է մեր շահերին հակասող իր հավակնություններն ունենալ ե՛ւ մեր տարածքի, ե՛ւ հարյուր տարի առաջ գոյություն չունեցած ու իրենից տարածքներ ներառած Ադրբեջանի հանդեպ էլ, վերջնարդյունքում՝ Արեւմուտքին դիմակայելու գործողություններում էլի Հայաստանին ներքաշելով պատերազմական լարվածության մեջ:

Հիմա այս բոլորի մեջ ո՞վ կդառնա Տավուշի, Գեղարքունիքի՝ մեր անվտանգության բուֆեր տարածքները հանձնողը, ո՞վ կստանձնի Հայաստանի անվտանգության բարձիկները ոչնչացնողի դերակատարությունը, այն տարածքների, որոնք ազատագրելու համար անցած պատերազմում մոտ հինգ հազար հայ է զոհվել: Նոր պատերազմն էլ առերեւույթ Արցախի համար էր, իրականում տարածաշրջանի վերաձեւման համատեքստում էր, եւ Արցախի կորստով մեր նոր կորուստների դուռն էր բացվում: Ո՞վ ռիսկ ունի ստանձնել հանձնողի դերը: Եւ այդ հանձնողը նախ ինքը պիտի հասկանա, թե ինչ անդառնալի կորուստների դուռ է բացում հայ ժողովրդի համար:

# Տավուշի գյուղերի հանձնումից մինչեւ ավտոբուսի հարկ

Ալիեւի պահանջած գյուղերի վերաբերյալ վարչապետը որ ասում է (Բաղանիս Այրում, Վերին Ոսկեպար-Աշաղ Ասկիփարան, Խեյրիմլի, Կըզըլհաջիլի), թե այդպիսի անուններով գյուղեր Ալմա-Աթիի հռչակագրով Հայաստանի տարածքում չկան, հուսով եմ՝ հասկանում է վերը մեր նշածը, հասկանում է, որ դրանով զրոյանում է Հայաստանի ողջ անկախական պատմությունը, որն սկսվել է մեզ սպառնացող բուֆերային գոտիներից ադրբեջանցուն դուրս շպրտելով: Եթե ոչ՝ հայ ժողովուրդը պետք է ձեւ գտնի ու իր քաղաքացիական, օրենսդրական իրավունքներն իրացնելով՝ հասկացնի բոլորին: Եւ դա պետք է նախ՝ միջազգային բոլոր կողմերի ախորժակին, շահերին եւ հրահրումներին դիմակայելու համար, քանի որ, եթե խաղաղության օրակարգով Ալիեւի հետ բանակցողը նրան չի կարողանում հասկացնել, որ Արցախի նախկին ղեկավարներից պարտադրանքով ողջ հայ ժողովրդին նվաստացնող հարցազրույցներ չվերցնեն, ուրեմն ինչեր չի կարողանալու սահմանազատման եւ այլ զիջումների պարտադրման ժամանակ: Կամ՝ անվտանգային տարածք հանձնելը, միջպետական նշանակության ճանապարհների օգտագործման հնարավորությունը կորցնելը չի հավասարակշռվում նոր ճանապարհի կառուցման խոստումով, դա հենց պարտվողականություն է, հետո ադրբեջանցիների թույլտվությա՞մբ ենք Վրաստան մտնելու:

Ասուլիսի ոգուց կարելի է եզրակացնել, որ մենք հետ չենք բերելու նաեւ Սեւ լճի, Սոթքի, վերջերս Ներքին Հանդից եւ այլ բնակավայրերից ադրբեջանցիների գրաված տարածքները, որոնք Ալիեւն իրենցն է համարում: Իսկ եթե հաղորդակցության ուղիների բացման անվան տակ՝ միջպետական ճանապարհներն էլ փաստացի ուրիշների վերահսկողությանը հանձնվի (ընդհանրապես՝ երկաթուղի- նշանակում է անկանխատեսելիություն, երբեք չգիտես՝ ինչ կամ ում կանգնեցնեն մեր տարածքով), ապա հաշվենք, որ Հայաստանն ընդհանրապես դառնում է բուֆեր՝ ուրիշների շահերի համար, եւ ոչ թե ՝ անկախ պետություն:

Ադրբեջանի՝ Հայաստանի դեմ միջազգային հայցերից հրաժարվելու դեպքում՝ Հայաստանի եւս հրաժարման հնարավորորության մասին վարչապետի ասածը առանձին քննարկման նյութ է. դահիճի եւ զոհի, հանցագործի եւ տուժողի կարգավիճակները հավասարեցնել չի կարելի, զոհն ու տուժողը երբեք չպետք է հրաժարվեն իրավական ճանապարհով արդարությունը վերականգնելուց:

Զարմանալի է նաեւ, որ ասուլիսին չհնչեցին քաղաքական հարցերին իրենց ազդեցությամբ հավասար հարցերը՝ քաղաքացուն հարկախեղդ անելու, տրանսպորտի թանկացման վերաբերյալ, դրանք այն հարցերն են, որոնցով իշխանությունը ճզմում է քաղաքացուն՝ վերջինիս մեջ ուժ եւ ցանկություն չթողնելով քաղաքականությամբ եւ իր իրավունքներով զբաղվելու: Ոչ ոք վարչապետին հարցերով գոնե չփոխանցեց այն ուղերձը, որ կա հանրության մեջ այդ առումով, եւ մենք հիմա դա կանենք:

Ասենք, բաց ասենք, որ բոլորիս կյանքը դիտավորյալ բարդացնում եք նոր հարկատեսակներով, դեղերի օնլայն դեղատոմսերով, տրանսպորտի սակագների անհերեկայելի թանկացմամբ, որպես քաղաքացի մեզ ոչնչացնում եք, որ բժիշկների, պոլիկլինիկաների դռները քարշ գալուց աչք չբացենք, ԱՐՄԵԴ-ում հստակ ունենաք բոլոր քաղաքացիների հիվանդությունների պատկերը, եւ իմացողն իմանա ՝ ում եւ ոնց արագ վերացնել, ոնց որ քովիդի ժամանակ արեցին: Տրանսպորտի փող չունենալով՝ մարդիկ անգամ Երեւանի կենտրոն իջնելուց կխուսափեն, ուր մնաց բողոքելու, բողոքի ցույց անելու մասին մտածեն: Ընդհանրապես՝ շարունակեք Երեւանի կենտրոնը բաժանել օլիգարխների միջեւ այնպես, որ մի ավելորդ մեքենա անգամ չկանգնի թանկ վարձավճարտուգանքների օլիգարխիական փողոցներում (հիշո՞ւմ եք՝ հարթակներից ո՞նց էիք բղավում արդարության մասին): Իսկ տրանսպորտի թանկացումն ընդհանրապես ծնկեցնելու է բոլորին. պատկերացրեք՝ տրանսպորտի համար քաղաքացին տարեկան վճարի 100 հազարին մոտեցող գումար, բժշկական ապահովագրության համար՝ 200 հազար: Թե որտեղից պիտի այդ գումարները գտնի ասենք ամսական 100 հազար դրամ վաստակողը՝ չգիտեմ: Ախր որպես հաշվարկի բազա դուք ձեր միլիոնանոց աշխատավարձերն եք հիմք ընդունել:

Դուք մաթեմատիկա անգամ չգիտեք, երբ ասում եք 8800 դրամանոց փաթեթ գնելու դեպքում մեկ ամսվա ընթացքում օրը 2 անգամ օգտվողների համար մեկ ուղեւորության արժեքը դառնում է 146 դրամ, իսկ օրը 4 անգամ օգտվողների համար մեկ ուղեւորության արժեքը դառնում է՝ 73 դրամ, այսինքն՝ ոչ թե թանկանում է, այլ էժանանում:

Էդ ո՞նց եք հաշվում: Շաբաթ-կիրակին հանած՝ մի 20-22 օրն 200 դրամով անում է առավելագույնը 4000- 4200 դրամ, նախ՝ կրկնակի թանկացնում եք փաստորեն: Երկրորդ՝ բավական շատ մարդիկ կան, որոնք շաբաթը մեկ-երկու օր են գնում աշխատանքի, մյուս օրերին տնից օնլայն են աշխատում, նրանցից 8800 դրամ վերցնելն ինչ է, եթե ոչ կողոպուտ օրը ցերեկով: Բացի այդ՝ 1 օրվա համար 880-900 դրամ՝ 8 ուղեւորությունը,դա թալան է, մարդ կա ՝ օրն այդքան կարող է ծախսել ընդհանրապես: Իսկ ո՞վ է ասում, որ երկու- երեք անգամից ավելի մարդիկ մեկ օրվա մեջ տրանսպորտ են նստում, հիմա ինչ անենք, ութ անգամ տարբեր ավտոբուսներ բարձրանանք -իջնենք, որ ձեր ութ անգամը լրացնե՞նք, կամ ինչո՞ւ պետք է օրական մեկ-երկու անգամ տրանսպորտ նստողը տասքնու գին վճարի: Ցնդե՞լ եք:

Եթե դուք իրականում ոչ թե մեր հաշվին հարստանալու, այլ տրանսպորտի աշխատանքը բարելավելու կամ ստվերը վերացնելու նպատակ ունենայիք, ապա միաժամանակ քարտեր կթողարկեիք, ինչպես Լոնդոնում է, որի մեջ ուղեւորն իր ցանկությամբ որքան կուզեր- դրամ կլիցքավորեր ու տրանսպորտում այդ քարտով կերթեւեկեր՝ դրամը վերջանալիս նորից լիցքավորելով: Վարորդը դրամի հետ գործ չէր ունենա, միաժամանակ գինն էլ, ասենք, հարյուրքսան դրամ կլիներ: Բայց դուք բոլոր առումներով թանկ ամսեվճար եւ տարեվճար եք սահմանում՝ էն գլխից քերթելով քաղաքացուն, փաստորեն նոր՝ ավտոբուսի հարկ սահմանելով, երբ պարզից պարզ է, որ ձեր նշած գումարների կեսն էլ չի արժենալու մեկ մարդու երթեւեկելը: Այսինքն՝ ե՛ւ ստվերն եք ուզում պահել, որից, ինչպես երեւում է, մինչեւ ամենավերեւ օգտվում են, ե՛ւ ուզում եք կողոպտել բոլորին:

Եթե տարածքները հանձնելը էս քնրած հասարակությունը մարսելու է, ցավով եմ ասում, ապա ավտոբուսային թալանը խփելու է ամեն մեկի անձնական գրպանին, երեւի այդ դեպքում են միայն քնրածները կաստաղում:

# Գերմանացի գիտնականները Արցախի մշակութային ժառանգության պահպանման հարցում անդրդվելի են

⇨1 Բեռլինում նախապես հայտարարած ադրբեջանցիների բողոքի հանրահավաքը չկայացավ: Փոխարենը ոչ մեծաթիվ հայ եւ գերմանացի մասնակիցներ, նրանց թվում նաեւ գրքի հեղինակներից **Թեսա Հոֆմանը**, Արցախի դրոշով փողոցում սատարեցին միջոցառման անցկացումը:

Միջոցառման ժամանակ բողոքի իր հստակ պատճառաբանված շարադրանքը նախ ներկայացրեց գրքի հեղինակներից դոկտոր **Հարություն Հարությունյանը**, որի հետ հաջորդող օրերին Հանրային ռադիոն հարցազրույց հրապարակեց, ուստի չկրկնենք այն՝ տեղի սղության պատճառով: Հաջորդող օրերին գրքի հեղինակները՝ դոկտոր պրոֆեսորներ **Անդրեաս Մյուլլերը**, **Մարտին Թամքեն**, դոկտորներ **Հարություն Հարությունյանը, Դագմար Հելլերը** բողոքի հայտարարություն տարածեցին՝ շեշտելով, թե « գիտական հանրության համար հրապարակային միջոցառումը ազատ ժողովրդավար երկրում» սպառնալիքի տակ է:

Ադրբեջանի դեսպան **Աղաեւը** այժմ կարծես ուրիշ մտահոգություն ունի: Գիտնականների բողոքին էլ չի արձագանքում, քանի որ զբաղված է գերմանական հեռուստատեսության մարտի 6-ին Ադրբեջանի մասին հեռարձակած հետաքննության պայթյունը խլացնելով: Մանավանդ որ այն ցուցադրվել է նաեւ Բունդեսթագում, տարբեր հարթակներում շարունակում է աղմուկը, իսկ դրա հետեւանքը եղավ այն, որ մարտի 6-ին Բաքվում փակվեց **Խադիջա Իսմայիլովայի** գլխավորած վերջին ազատ հեռուստաընկերությունը՝ Toplum TV -ն, 12 լրագրողները կալանավորվեցին: (Ֆիլմի մասին գրել ենք «**Ազգ**»ի մարտի 7-ի համարում-Ա.Ն.Հ.): Այս ճկուն, երիտասարդ դիվանագետի ջանքերով փետրվարի 26-ին ադրբեջանական համայնքը Քյոլնի Մայր տաճարի առջեւ հանրահավաք էր գումարել՝ ի հիշատակ՝ իրենց ձեւակերպմամբ «Խոջալուի ցեղասպանության» զոհերի եւ պահանջում էր, ուշադրություն՝ արդարադատություն: Սա դահիճից զոհի դեր ստանձնելու շարունակվող խաղն է, եւ Ադրբեջանն այն միշտ հիշում, օգտագործում է, երբ վտանգ է տեսնում: Այդ վտանգն այս անգամ «Արցախի մշակութային ժառանգություն» գրքի շնորհանդեսն ու քննարկումն էր Բեռլինում, այսինքն՝ հայոց ինքնության գիտական հաստատումը: Կազմակերպիչները՝ Կոնրադ Ադենաուր հիմնադրամը, Գերմանիայի արտաքին քաղաքականության ընկերակցությունը, կարծում ենք, ծանոթ էին դեսպան Աղաեւի՝ հատկապես Արցախ տեղանվան կիրառության դեմ ալերգիկ ժառանգական ախտին:



Լուսանկարը՝ Թեսա Հոֆմանի ֆբ էջից. Մարտի 6-ին բողոքի հանրահավաք չարեցին ադրբեջանցիները, փոխարենը Բեռլինում Արցախի եւ Հայաստանի դրոշները «խոսեցին»:

⇨4

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ
Իրանագետ

# Եթերային պատկերացումներ հայ-իրանական ռազմական համագործակցության հեռանկարի մասին

ՀՀ պաշտպանության նախարար **Սուրեն Պապիկյանի՝** մարտի 6-ի Թեհրան այցելության մասին հայկական եւ իրանական մամուլի փոխանցած տեղեկատվությունը սահմանափակվում էր միայն պաշտոնական լրահոսում տեղ գտած տեղեկագրություններով:

Ըստ իրանական մամուլի, ՀՀ պաշտպանության նախարարի հետ հանդիպման ժամանակ, ԻԻՀ նախագահ **Էբրահիմ Ռայիսին** ընդգծել է տարածաշրջանում սահմանների փոփոխությունը մերժելու, երկրների ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը հարգելու մասին ԻԻՀ հստակ դիրքորոշումը եւ ողջունելի է համարել Կովկասում խաղաղության ու կայունության ամրապնդմանն ուղղված յուրաքանչյուր քայլ:

ԻԻՀ նախագահը հույս է հայտնել, որ իրանցի գործընկերոջ հետ ՀՀ պաշտպանության նախարարի բանակցությունները կնպաստեն տարածաշրջանի անվտանգության մակարդակի բարձրացմանը: Ըստ ԻԻՀ նախագահի, միայն այս տարածաշրջանի երկրների համագործակցության շնորհիվ հնարավոր կլինի երաշխավորել տարածաշրջանի անվտանգությունն ու խաղաղությունը: Իսկ օտարերկրացիներին ասպարեզ տալը, ԻԻՀ նախագահի խոսքերով, չի կարող անվտանգություն ապահովել:

Մինչ Էբրահիմ Ռայիսիի հետ հանդիպելը, Սուրեն Պապիկյանը աշխատանքային քննարկումներ էր ունեցել իր գործընկերոջ հետ, որի ընթացքում Իրանի պաշտպանության նախարար **Մոհամմադ Ռեզա Աշթիանին** տարածաշրջանային համապարփակ ու կայուն խաղաղությանն աջակցելու քաղաքականությունը համարել է Իրանի սկզբունքային դիրքորոշումն ու հարեւան երկրների հետ հարաբերությունների ամրապնդումը գնահատել որպես Իրանի արտաքին քաղաքականության հիմնարար սկզբունքներից մեկը, ընդգծելով սակայն, Հայաստանի հետ հարաբերությունների առանձնահատուկ նշանակությունը:

Նախարար Աշթիանիի համոզմամբ, տարածաշրջանի անվտանգային համակարգը պետք է ձեւավորվի հենց այս տարածաշրջանում:

Հասկանալի է, որ ռազմական ու անվտանգային հարցերի շուրջ երկու պաշտպանական գերատեսչությունների ղեկավարների միջեւ տեղի ունեցած քննարկումների մասին ավելի մանրամասն տեղեկատվություն հնարավոր չէր ստանալ պաշտոնաթերթերից: Բայց, ընդառաջ գնալով ՀՀ պաշտպանության նախարարի այցին, իրանական մամուլի որոշ ներկայացուցիչներ նախարար Պապիկյանի Թեհրանում գտնվելու օրերին հանդես են եկել նաեւ հայ-իրանական ռազմական համագործակցության վերաբերյալ ոչ պաշտոնական հրապարակումներով:

Քաղաքական որեւէ հոսանքի կամ կուսակցության հետ իր առնչությունը չբացահայտած հայտնի իրանցի բլոգեր **Բահման Հեդայաթիի** կողմից խմբագրվող Parsine. Com տեղեկատվական-վերլուծական կայքը, որի գործունեության օրակարգում արգելափակման առնվազն երկու դեպք է արձանագրված, հայ-իրանական ռազմական համագործակցության թեմային անդրադարձած տեղեկատվական կայքերի թվին է պատկանում: Կայքի հրապարակած ութ րոպեանոց տեսանյութը անդրադարձ է կատարել Արցախյան վերջին պատերազմից հետո Հայաստանի ռազմական ներուժին եւ Իրանի հետ պաշտպանական ոլորտում ձեռք բերված պայմանավորվածություններին:



Տեսանյութի վերծանումը թարգմանաբար ներկայացվում է ընթերցողի ուշադրությանը առանց միջամտության.

*«Արցախյան երկրորդ պատերազմից հետո Երեւանին հայտնի դարձավ, որ թե՛ որակապես, եւ թե՛ քանակապես Հայաստանի բանակը զիջում է Ադրբեջանին, որի պատճառով էլ, Ադրբեջանին վերադարձնելով Արցախի մի զգալի մասը, Երեւանը ձեռնամուխ եղավ խաղաղության պայմանագրի ստորագրմանը: Զուգահեռաբար, երկրորդ պատերազմից հետո, Հայաստանը որոշեց Ֆրանսիայի ու Հնդկաստանի հետ զենք ու զինամթերք գնելու մասին պայմանագրեր կնքել եւ հզորացնել իր ռազմական ներուժը:*

Սակայն Բաքուն թույլ չտվեց Հայաստանին վերակառուցել իր բանակը եւ Արցախի երրորդ պատերազմի ընթացքում իր հսկողության տակ վերցրեց ողջ Լեռնային Ղարաբաղը: ***Իլհամ Ալիեւը*** *չբավարարվեց դրանով: Նա որոշում է կայացրել հարվածել նաեւ Հայաստանի հարավային մարզերին, օրինակ՝ Սյունիքին, եւ այն կտրել Հայաստանից: Իսկ որպես հաջորդ քայլ Ալիեւը մտադիր է ոչնչացնել շրջափակման մեջ հայտնված ողջ Հայաստանը:*

Սակայն, Իլհամ Ալիեւի եւ իր փափագած երազանքների մեջ կա մի խոչընդոտ, որը կոչվում է Իրան:

Իրանի բարձրաստիճան ղեկավարության, այդ թվում՝ կրոնապետ ***Ալի Խամենեիի***, *ԻԻՀ բանակի ցամաքային ուժերի գլխավոր հրամանատար* ***Ամիր Քիումարսի*** *եւ Կորպուսի ցամաքային ուժերի գլխավոր հրամանատար* ***Փաքփուրի*** *խոսքերով, Իրանին սահմանակից բոլոր երկրների հետ սահմանները կարմիր գիծ են համարվում, եւ ոչ մի երկիր իրավունք չունի հարձակվել այդ սահմանների վրա եւ կտրել Իրանն իր հարեւաններից:*

Իրանին սահմանակից երկրներից է նաեւ Հայաստանը, որը զրկված լինելով իր դաշնակից Ռուսաստանի աջակցությունից, որոշել է հեռացնել նրանց Հայաստանի տարածքից եւ ռուսներին փոխարինել իրանցիներով:

Իրանից բացի Հայաստանի հետ անվտանգային ու ռազմական պայմանագրեր են ստորագրել նաեւ Ֆրանսիան ու Հնդկաստանը: Ֆրանսիան բացահայտ կերպով հայտարարել է, որ Հայաստանի տարածքում ռազմակայան ունի: Սակայն Իրանը որոշ նկատառումներից ելնելով, առայժմ աշխատում է դրա մասին չխոսել:

Մյուս կողմից, Ֆրանսիայի ներկայությունը պատճառ է դառնում, որ Հայաստանը հակում ունենա դեպի ՆԱՏՕ, որի համար էլ Իրանը պետք է հարավկովկասյան երկրների՝ ՆԱՏՕ-ին մերձենալու հարցում խիստ զգուշավորություն ցուցաբերի:

Այսօր, երբ Հայաստանի վրա Ադրբեջանի հարձակման հավանականությունը շատ բարձր է գնահատվում, Երեւանը որոշել է Ադրբեջանի սպառնալիքը կանխելու համար դիմել իր հզոր եւ հուսալի հարեւան Իրանին:

Հայկական մամուլի տարածած տեղեկատվության համաձայն, Իրանի ու Հայաստանի միջեւ ստորագրվել են անվտանգության ու ռազմական ոլորտում համագործակցության համաձայնագրեր, որոնք Իրանին թույլ են տալիս Հայաստանի տարածքում ռազմաբազա տեղակայել եւ ապահովել Հայաստանի պաշտպանությունը մյուս հարեւաններից:

Անհրաժեշտ է պատկերացում ունենալ, թե Իրանն ինչպիսի՞ զինտեխնիկա կարող է տեղակայել Հայաստանում եւ իր ռազմակայանում:

Հնարավոր է, որ առաջին փուլում Իրանը Հայաստանի տարածքում տեղակայի իր փոքր եւ միջին հեռահարության պաշտպանական զենքերը, ինչպիսիք են՝ «տակտիկական Սայյադ», «Խորդադ-15» եւ «Մաջիդ» պաշտպանական համակարգերը, նպատակ ունենալով ապահովել իր ռազմաբազայի ու դրան հարող վարչական տարածքների անվտանգությունը: Հետագայում Իրանը կարող է Հայաստանում տեղակայել նաեւ «Խորդադ-3» տիպի հեռահար պաշտպանական համակարգ, որպեսզի Հայաստանի պաշտպանական հարթակն ավելի հզորանա:

Հաջորդ փուլում Իրանը արդիականացված T-72 տիպի զրահապատ ստորաբաժանումների տեղակայման միջոցով կարող է զգալիորեն հզորացնել Հայաստանի զրահապատ հրետանու հնարավորությունները:

Սակայն, Հայաստանին տրամադրվելիք զենքերի ամենագլխավորը կարող է լինել տակտիկական եւ փոքր հեռահարության «Ֆաթեհ-110» տիպի հրթիռների սերնդին պատկանող զինատեսակը:

Այդ շարքից Հայաստանին տրամադրվող հրթիռներից կարող է լինել 86 կիլոմետր հեռահարության «Աբաբիլ» հրթիռը, որն ունի 45 կիլոգրամանոց մարտագլխիկ:

Մյուս հրթիռը, որն ըստ որոշ վերլուծությունների կարող է Հայաստանում տեղակայվել, «Ֆաթհ» հրթիռն է, որի արդիականացված տարբերակն ունի 300 կիլոմետր հեռահարություն եւ 100 կիլոգրամանոց մարտագլխիկ, եւ կարող է օդ բարձրանալ 6 գործարկիչներից:

Բարեբախտաբար, իրանական հրթիռները բավականին մատչելի են, ուստի դրանք մեծ քանակությամբ կարող են տեղակայվել Հայաստանում:

Հնարավոր է Հայաստանին տրամադրել նաեւ «Ամպրոպ 500» տիպի հրթիռներ, որոնք արձակվում են 2 գործարկիչների միջոցով, եւ իրենց հարվածի շառավիղը կազմում է 500 կիլոմետր:

Սակայն Հայաստանին տրամադրվող ամենահզոր ու ամենահեռահար հրթիռը կարող է լինել «Զուլֆաղարը», որն ունի 700 կիլոմետրանոց հեռահարություն եւ 500 կիլոգրամանոց մարտագլխիկ: Այն արձակվում է զույգ գործարկիչներից:

ԱԹՍ-ների հարցում նույնպես Իրանը կարող է Հայաստանին առաջարկել բազմատեսակ արտադրանք, որոնցից կարելի է առանձնացնել 136 սերիային պատկանող «Շահեդ»-ը, 131 սերիայից «Ֆառռար»-ը եւ «Արաշ» տիպի կամիկաձե թռչող սարքը»:

Parsine. Com-ի եթեր հեռարձակված տեսանյութում խոսվում է նաեւ Հայաստանին առաջարկվող իրանական արտադրության այլ զինատեսակների մասին: Իսկ վերջում նյութի հեղինակն անդրադառնում է հայկական բանակի հզորացմանը նպաստող Թեհրանի ու Երեւանի միջեւ ստորագրված համաձայնագրերի էֆեկտիվությանը, նշելով, որ Ադրբեջանի կողմից Պակիստանում արտադրվող JF-17 Thunder կործանիչների Բաքու տեղափոխվելուց անմիջապես հետո, հայկական մամուլում տեղ գտած արձագանքները վկայեցին, որ Երեւանն այդ խնդրին շատ լուրջ է մոտենում: Եվ այդ պատճառով էլ Հայաստանը վստահ է, որ Իրանի նման հուսալի հարեւանի աջակցությունը կարող է երաշխավորել երկրի անվտանգությունը:

Տեսանյութի հեղինակը Թեհրանի ու Երեւանի միջեւ պաշտպանական ոլորտին վերաբերող համաձայնագրերի ստորագրումը դրական է գնահատում եւ տեսակետ արտահայտում, որ Իրանի հետ համագործակցությունը կկանխի Հարավային Կովկասում նոր պատերազմի վտանգը եւ կերաշխավորի Իրանի ազգային շահերը:

## Ադրբեջանցի փաստաբանի՝ Հայոց ցեղասպանության փառաբանման հայցով դատարան պիտի դիմել

Մարտի 13-ին ԱՄՆ-ից փաստաբան **Այնուր Բաղիրզադեն** (Aynur Baghirzade) X-ի հարթակում հետեւյալ գրառումն արեց՝ «Զանգեզուրի միջանցքը Հայաստանը կկտրի Իրանից, 8 գյուղերի վերադարձը՝ Վրաստանից, ՀՀ-ի մյուս հարեւաններն Ադրբեջանն ու Թուրքիան են: ՀՀ-ն Ադրբեջանի գավառ դարձնելու, տարածաշրջանում խաղաղություն վերահաստատելու գեղեցիկ նախագիծ է…»: Նրան պատասխանեց հակասեմականության դեմ պայքարող կանադացի հրեա **Ռախելի Լեահը** (Racheli Leah): «Քաջ հասկանում ես, որ խոսում ես Հայոց ցեղասպանության մասին՝ փառաբանելով այդ ցեղասպանությունը»: Բաղիրզադեն հակադարձեց՝« խոսքս խաղաղ հարեւանի մասին է, որ ռազմական հարձակման ծրագիր չունի», ինչն արժանացավ Ռախելի հարվածին «դրա մասին չես խոսում: Փառք աստծո, որ դու այն մարդը չես, որ նման ցեղասպան որոշում կայացնես»: «Նախ կարդա, թե գենոցիդն ինչ է»: Բաղիրզադեի վերջին պատասխանը բոլոր ժխտողների լեզվի տակ է, երբ էլ փաստարկ չեն ունենում:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

# Մի պատվաբեր «սեւ ցուցակ»

ԱՐԾՎԻ ԲԱԽՉԻՆՅԱՆ

Վերջերս Դիմագրքի ռուս օգտատերերից մեկը՝ **Անաստասյա Բուռլակովան,** հանդես է եկել հետեւյալ գրառմամբ.

«Ուզում էի գրքեր տանել Մոսկվայի գրադարան: Ինձ ցույց տվեցին այն հեղինակների ցանկը, որոնց հանում են կամ որոնց գրքերով չեն կարող ֆոնդերը համալրվել»: Եվ կցել է լուսանկարը մի թղթի, որի վրա ռուս ժամանակակից, նաեւ մի քանի արտասահմանցի հեղինակների անվանացանկն է...

Հանում են... որ հետո ի՞նչ անեն, խարո՞ւյկը նետեն...

Հակագովազդը յուրովի գովազդ է: Ցանկի գրողների մեծ մասին կարդացել եմ, եւ այս «սեւ ցուցակը» դեռեւս չընթերցվածների գործերին ծանոթանալու ցանկություն առաջացրեց:

Բնականաբար, ցանկի մեծամասնությունը ներօրյա կրեմլյան ռեժիմին եւ Ուկրաինայի պատերազմին դեմ արտահայտվածներն են: Անկախ դրանից՝ նրանք ներօրյա ռուս գրականության ամենատաղանդավոր եւ միջազգայնորեն հայտնի դեմքերն են, մեծ մասն այսօր՝ հարկադիր տարագրության մեջ, հատկապես Իսրայելում **(Դինա Ռուբինա, Վիկտոր Շենդերովիչ**) եւ Գերմանիայում (Լյուդմիլա Ուլիցկայա, 2015 թվականի գրականության Նոբելյան մրցանակի դափնեկիր **Սվետլանա Ալեքսիեւիչ**, մեր **Նարինե Աբգարյանը**): (Իսկ ՌԴ նախագահի մամլո քարտուղար **Դմիտրի Պեսկովը** հայտարարել է, որ Կրեմլը Ռուսաստանից հեռացած գրողներին չեղարկելու միտք չունի): Ցանկում աչքի ընկնող անուններից են նաեւ արձակագիրներ **Գուզել Յախինան**, «Ռուսաստանի ամենասկանդալային բանաստեղծուհի» **Ալինա Վիտուխնովսկայան**, նաեւ **Միխայիլ Վելլերը**, որը հաճախ է հանդես եկել Հայաստանի ու Արցախի իրավունքների պաշտպանությամբ, 2020-ի պատերազմի ժամանակ հայտարարել, որ «Ղարաբաղը հայկական հող է՝ դարեր ու հազարամյակներ շարունակ»: Այդ ցանկում են նաեւ **Դմիտրի Գլուխովսկին, Ալեքսանդր Իլիչեւսկին, Ալեքսեյ Իվանովը, Յուլյա Լատինինան, Վլադիմիր Սորոկինը**, նաեւ հայերեն լույս տեսած «Կրեմլի ամբողջ շքախումբը» համաշխարհային բեսթսելերի հեղինակ **Միխայիլ Զիգարը** (որը ոչ միայն համարձակվել է քննադատել **Պուտինին**, այլեւ, ի շարս այլ «մեղքերի»՝ ամուսնացել է տղամարդու հետ) եւ այլք: Անշուշտ, այս ցանկում են հեռակա կարգով ազատազրկման դատապարտվածներ **Իվան Վիրիպաեւը** եւ **Բորիս Ակունինը** (հայտնի իր քաղաքական հայտարարություններով եւ Վլադիմիր Պուտինի ռեժիմի քննադատությամբ, որը ՌԴ նախագահին համեմատել է Կալիգուլայի հետ): Կրեմլի «թեթեւ ձեռքով» մեկ գիշերվա մեջ արտասահմանյան գործակալներ հռչակված (կամ չհռչակված) այս գրողների ժառանգության մերժումն այսօրվա




ռուսական ռեժիմի դժբախտ դեմքն է: Ուստիեւ պատահական չէ, որ ցանկում առկա երկու հանգուցյալ ռուս գրողները խորհրդային այլախոհներ **Վլադիմիր Վոյնովիչն** ու **Էդուարդ Լիմոնովն** են: Հաջորդ ցանկում պիտի փնտրել արդեն **Բուլգակովի, Պաստեռնակի** եւ **Սոլժենիցինի** անունները...

«Վերադարձ դեպի ԽՍՀՄ» կարգախոսն է հիշեցնում նաեւ սույն «սեւ ցուցակում» առկա **Ջորջ Օրուելի** անունը: Հասկացանք, «Անասնաֆերման»... Իսկ կանադացի **Լինվուդ Բարքլին** մերժվում է, քանի որ Ռուսաստանի՝ Ուկրաինա ներխուժումից հետո վերջինս հրաժարվել է իր գրքերի ռուսերեն հրատարակություններից: Բայց միջազգային «ֆաշիզմի» դեմ մեն-մենակ պայքարող Ռուսաստանը հավանաբար մեծագույն վտանգներ է տեսնում հատկապես գիտաֆանտաստիկ եւ ֆենթեզի ժանրի գրականության մեջ, քանի որ ցանկի մյուս արտերկրացիները՝ ամերիկացի **Սթիվեն Քինգը**, անգլիացիներ **Ջոան Ռոուլինգը, Ջո Աբերկրոմբը** եւ **Նիլ Գեյմանը**, լեհ **Ադամ Պշեխշտան**, այդ ժանրի գրողներ են... Դե ինչ, ռուս դեռահասներին «Հարի Փոթերը» ոչինչ չի կարող տալ, ուրիշ բան են Անգետիկը կամ Չուկն ու Գեկը...

Օրինաչափ է, որ «հպարտ մենության» մեջ աշխարհից մեկուսացված Ռուսաստանում նորից գործում են սեփական ու համաշխարհային արժեքները քաղաքականացնելու եւ արգելելու բոլշեւիկյան հնամյա սկզբունքները: Եվ այսօրվա Ռուսաստանի միապետն ինչո՞վ է պակաս իր նախորդներից, որոնք, թողած երկրում տիրող հազար ու մի տարրական կարիքները, հարկ էին համարում արվեստագետներին սովորեցնել ճիշտ ստեղծագործելու ձեւերը, գետնին էին հավասարեցնում ժամանակակից նկարիչների ցուցահանդեսը կամ պաշտոնապես ելույթ ունենում ռոք երաժշտության դեմ...

Անցյալ տարի Սանկտ-Պետերբուրգում արվեստի գործիչների հետ ունեցած ելույթում Վլադիմիր Պուտինն ընդգծել է մշակութային բազմազանության կարևորությունը:

Սակայն առավել քան ակնհայտ է, որ եթե ռուսական գրադարաններն ու գրքի ոլորտն առաջնորդվեն վերոհիշյալ ցուցակով՝ դժվար թե հնարավոր լինի խոսել Ռուսաստանում մշակութային եւ առհասարակ՝ որեւէ կարգի բազմազանության մասին...

Եվ ինչպե՞ս չհամաձայնել քաղաքագետ, նույնպես «արտասահմանյան գործակալ» հորջորջվող **Անդրեյ Կոլեսնիկովի** վերջին հոդվածի խորագրին՝ «Ռուսաստանն այրում է իր ապագան»...

Հակագովազդը յուրովի գովազդ է: Հուսով եմ՝ որ այս արձագանքը կարդացողները նույնպես այսուհետ կսկսեն փնտրել եւ կարդալ այդ պատվաբեր «սեւ ցուցակի» գրողներին...

# Գերմանացի գիտնականները Արցախի մշակութային ...

⇨2 Դեսպանն իր ելույթներում նույն կազմակերպություններին, նաեւ Հայնրիհ Բյոլ հիմնադրամին անցյալ սեպտեմբերին մեղադրել էր Ադրբեջանին դեմոնացնելու, նրանց հայամետ լինելու մեջ, չմոռանալով դեմոկրատական երկրում գլխավոր գործիքը՝ «նրանք փորձում էին լռեցնել իմ խոսքը»... գրել էր՝ ի բողոք: Արցախի գրքի շնորհանդեսի պարագայում իբրեւ սպառնալիք ջանում էր այս կազմակերպությունների ֆինանսական աջակիցներին ապակողմնորոշել:

## Ո՞ւր են Ջորջ Սորոսի հայ «զավակները»

Դեսպանն իհարկե շատ զգույշ է, հատկապես Իսրայելին քննադատելու, Գազայում կատարվողի, Համասի վերաբերյալ որեւէ դիրքորոշում չի արտահայտել, նույնիսկ այն դեպքում, երբ ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանում Իսրայելի դեմ Հարավային Աֆրիկայի հայցին կողմ էր արտահայտվել Ադրբեջանը՝ լինելով Իսլամական երկրների միավորման անդամ: 2024-ի հունվարին դեռ նա զբաղված էր հայերին եւ հրեաներին թշնամացնելու իր զուգահեռ առաքելությամբ (հիշեցնում էր Երեւանում հրեական միակ սինագոգի դեմ կատարված ոտնձգությունը), մասնակցում էր Ադրբեջանից Գերմանիա տեղափոխված հրեական համայնքի 10-ամյակի հանդիսություններին, շեշտում էր հրեաների հետ ադրբեջանցիների բարեկամության խոր արմատների մասին, սակայն իր հարթակում տեղադրած «բացահայտումների» մեջ մի փաստ կարող է ապագայում խնդիրներ հարուցել: Գերմանա-ադրբեջանական խորհուրդ կազմակերպությունը, որ X-ի հարթակում դեսպան Աղաեւի աջ թեւն է, մինչեւ միջոցառումն անընդհատ զբաղվում էր պատմության կեղծարարությամբ, մարտի 4-ին միջոցառման կազմակերպիչներին նորից «հուշել էր», թե իրականում հայերն են ոչնչացրել Ադրբեջանի մշակութային ժառանգությունը՝ մզկիթները հիմնահատակ քանդելով, ախոռի վերածելով, դրանից ավելի առաջ՝ մարտի 2-ին ցույց տվել, որ ադրբեջանական հասարակական կազմակերպությունների բողոքի բաց նամակը տպագրել է պետական լրատվական գործակալությունը՝ «Ազերթաջը», ավելի վաղ՝մարտի 1-ին ներկայացրել այն «բացահայտումը», թե Արցախի ժառանգության պահպանության քննարկման կազմակերպիչներից մեկը՝ Գերմանիայի արտաքին քաղաքականության ընկերակցությունը սնվում է Սորոսի հիմնադրամից: «Հանելուկ. Գերմանական ո՞ր ուղեղային կենտրոնն է 100 000 եվրո ստանում Բաց հասարակության հիմնադրամից՝ իր չսիրած երկրներին կանոնավոր թիրախավորելու համար», գրել էր հիշյալ խորհուրդն իր էջում՝ տեղադրելով Սորոսի լուսանկարին կից ԳԱՔԸ ներկայացուցիչների լուսանկարները, կից՝ ֆինանսավորման վկայությունը: Այդ հարթակում տեղադրված այս «բացահայտումը» հակահրեական կարելի է գնահատել, քանի որ Գերմանա-ադրբեջանական խորհուրդը շեշտում է Ջորջ Սորոսի ծագումը: Ադրբեջանական կազմակերպությունները Արցախի ժառանգության պահպանման միջոցառման վերաբերյալ շեշտում էին իսլամաֆոբ եւ ռասիստական որակումները, Բաքվում նույնանուն վտանգներից պաշտպանվելու գիտաժողովներ են գումարում՝ պետական հովանավորությամբ եւ մասնակցությամբ, իսկ Հայաստանում եւ նրա սահմաններից դուրս նույն ստնտուի՝ Ջորջ Սորոսի հայ «զավակներն» ինչո՞ւ այս փաստը չեն շրջանառում:

Գերմանիայում ճանաչված հրապարակախոս, ծագումով հրեա **Հենրիկ Մ. Բրոդերը** (Henryk M. Broder), որ երբեք անտարբեր չի մնում հայ ժողովրդի դեմ թուրք-ադրբեջանական ոտնձգություններին, ինչի մասին բազմիցս գրել ենք «**Ազգ**ում», մարտի 7-ին անդրադարձավ Արցախի մշակութային ժառանգության վերաբերյալ միջոցառման կազմակերպիչների եւ մասնակիցների հանդեպ Ադրբեջանի 20 հասարակական կազմակերպությունների բաց նամակին, որով սպառնում էին «հայկական քարոզչական միջոցառումը չեղարկել»: Բրոդերի քննադատությունն ուղղված էր նաեւ գերմանական երկու հաստատություններին՝ Կոնրադ Ադենաուեր հիմնադրամին եւ Գերմանիայի արտաքին քաղաքականության ընկերակցությանը, որ իրադրությունը չսրելու համար նախընտրել էին չեղարկել սրահում հյուրերի եւ մասնակից բանախոսների ներկայությունը՝ այն փոխադրելով միայն առցանց տիրույթ:

Ադրբեջանցիների «բաց նամակում հզոր Հայաստանը ներկայացվում է որպես ագրեսոր, որ սպառնում է փոքր Ադրբեջանին եւ նրա մշակութային ժառանգությանը: Այժմ գիտենք, թե վերջին խոսքն ով է ասում՝ Ադրբեջանի հասարակական կազմակերպությունների անդամները եւ «Բաքվի քաղաքագետների ակումբը» պիտի որոշեն, թե ո՞ր գիրքը, ի՞նչ շրջանակում պետք է ներկայացվի Գերմանիայում», գրեց Բրոդերը Achgut.com կայքում:

telepolis.de հարթակում մարտի 12-ին **Հարալդ Նոյբերը,** անդրադառնալով Գերմանիայում գիտական աշխատանքի վրա Ադրբեջանի հսկողությանը՝ Արցախի ժառանգության մասին գրքի հեղինակների բողոքին, ներկայացրեց նրանցից Քիլի համալսարանի աստվածաբան **Անդրեաս Մյուլլերի** հետ զրույցը: Գերմանացի գիտնականը բացատրում է, որ գիտական հետազոտությունը հրապարակային պիտի ներկայացվի, քննարկվի, նույնիսկ երբ կարծիք կա, թե միակողմանի է: Լրագրողի այն հարցին, թե «նման խոչընդոտող դեպքեր էլի եղե՞լ են», Մյուլլերը պատասխանում է , որ Հայաստանին առնչվողի պարագայում՝ այո, օրինակ բերելով թուրքերի՝ Հայոց ցեղասպանության թեմայով միջոցառումներին անընդհատ խանգարելու փորձերը: Հաջորդ՝ Բեռլինում Ադրբեջանի դեսպանության դերակատարման մասին հարցին պատասխանելով՝ Մյուլլերը վստահ է, որ ողջ համակարգված աշխատանքը հենց այդ կառույցն է կատարել: Գլխավոր փաստարկն էլ պարտադրել է՝ պիտի խոսել նաեւ հայերի՝ Ադրբեջանի մշակութային ժառանգության ոչնչացման մասին: Մյուլլերը քննադատում է ԳԴՀ ԱԳՆ-ին, ԵԽ-ին, որոնց համար տնտեսական կապերն առավել կարեւոր են, քան Արցախի բնակիչներն ու մշակութային ժառանգության պաշտպանությունը: «Արցախը գազի եւ նավթի եվրոպական պահանջի զոհ դարձավ», նկատել է տալիս Մյուլլերը՝ հիշեցնելով գերմանացի, եվրոպացի քաղաքական գործիչների Ադրբեջանից կաշառառության բազմաթիվ փաստերը: Մյուլլերը սակայն նշում է, թե պիտի շարունակեն իրենց գործը՝ Արցախի մշակութային ժառանգության մասին գիրքն այլ վայրերում ներկայացնել, ինչպես նաեւ բողոքի նամակներ տարբեր կառույցների ուղարկելը, քանի որ «Արցախում արդեն գերեզմաններն են բուլդոզերներով քանդում»: Մյուլլերը շարադրում է, որ Բաքվի նպատակը հայկական հետքը Արցախում իսպառ վերացնելն է եւ կոչ է ուղղում միջազգային հանրությանը՝ հայացքը Հայաստանին հառել, քանի որ Ադրբեջանի հետագա հարձակումներից ՀՀ-ն պաշտպանված չէ:

Ազգ ՀԱՎԵԼՎԱԾ ՄՇԱԿՈՒՅԹ
Թիվ 008(5790)
14-20 ՄԱՐՏ
2024

ԴԱՎԻԹ ԳՅՈՒԼԶԱԴՅԱՆ

# Արժանավորների աննահանջ պաշտպանն ու պահապանը

## *Էդուարդ Աղայանի ծննդյան 111-ամյակի առթիվ*

***Մարտի 16-ին լրանում է համբավավոր լեզվաբան, երկար տարիներ ԵՊՀ ընդհանուր և համեմատական լեզվաբանության ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի համեմատական լեզվաբանության բաժնի վարիչ, ակադեմիկոս Էդուարդ Աղայանի ծննդյան 111-ամյակը: Այդ նվիրական առիթով՝ ստորեւ լեզվաբան Դավիթ Գյուլզադյանի հոդվածը, որի ամբողջական տարբերակը azg.am կայքում:***

Էդուարդ Աղայանը «Լեզվաբանության ներածություն» գիտակարգը դասավանդեց մեզ առաջին կուրսում: Չեմ կարող ասել, թե դասախոսելիս ճարտասան էր Աղայանը: Նույնիսկ հակառակը, եթե լեզվաբանությամբ հետաքրքրվելիս չլինեի, դասախոսությունը գրառելիս չլինեի և փորձեի միայն լսել նրան, հաստատապես կձանձրանայի, ինչպես որ, իրոք, ձանձրանում էին լեզվաբանությամբ առանձնապես չհետաքրքրվողները, որովհետև ձայնը ցածր էր հարյուր հոգու համար նախատեսված, դահլիճ հիշեցնող մեծ լսարանում (դրա համար միշտ առաջին շարքում էի նստում նրա դասերին), և նույն միտքը տարբեր ձևերով կրկնում էր մի քանի անգամ: Երբ ինչ-որ բան այս կամ այն ուսանողը չէր հասցնում գրառել և խնդրում էր դասախոսին կրկնել, ասում էր. «Եթե ձեր հարցը տրամաբանական չէ, ես մնալու համար ինձ մի՛ ընդհատեք: Ես դիտավորյալ նույն բանը տարբեր ձևերով կրկնում եմ, և այդ կրկնություններից մեկն անպայման գրի առած կլինեք»: Աղայանի առավելությունն այն էր, որ դասախոսելիս փայլատակումների պահեր էր ունենում: Այսօր հանրածանոթ է մասնագիտական շրջանակներում լեզվաբանի ինչութաբանական տեսությունը՝ ինչույթ-ինչյուն զուգանդամի փոխարեն ինչույթ-ինչյուն-ինչուրդ եռանդամ հայեցակարգով, որը նա հրաշալիորեն է ներկայացրել 1987-ին լույս տեսած իր «Լեզվաբանության հիմունքներում»: Բայց բանն այն է, որ այդ տարեթվից հինգ տարի առաջ է ստեղծել այդ հայեցակարգը՝ 1982-ին՝ մեր՝ ուսանողներիս աչքի առաջ՝ մի զարմանալի պայծառացմա՞մբ ասեմ, թե՞ փայլատակմամբ: Մասնագիտական մանրամասների մեջ չեմ մտնի, միայն կասեմ, որ երբ ինչուրդ-ինչյուն հակադրամիասնությունն էր ներկայացնում, ինձ թվաց՝ նույն հակադրությունն է, ինչ որ մինչ այդ ներկայացվում էր ինչյուն-ինչույթ հակադրությամբ, և կարծես զուտ տերմինաբանական փոփոխություն անելիս լիներ: Հարցրի. «Դուք ինչույթը չե՞ք ընդունում»: Կտրուկ շրջվեց դեպի ինձ, խիստ նայեց (խստություն խաղալու սովորություն ուներ), առանց հարցիս պատասխանելու՝ շրջվեց դարձյալ դեպի գրատախտակը, շարունակեց բացատրել, բայց բացատրությունն այն հունով տարավ, որ, զգում էի, հարցիս է պատասխանում: Երբ ավարտեց մեկնաբանությունը, դարձյալ կտրուկ շրջվեց դեպի ինձ և (դարձյալ խաղալով) զայրագին ու արագ հարցրեց ինձ.

- Հիմա ես ընդունո՞ւմ եմ ինչույթը, թե՞ չեմ ընդունում...

Ասեմ, որ ինչական այդ եռաստիճան մեկնաբանությունը, որ վերաբերում էր



լեզվի տրամաբանական, հոգեբանական և արտասանական կողմերին և դրանցով էր պայմանավորված, Աղայանը ներառեց քննական հարցաշար:

Էդուարդ Աղայանը հայկական իրականությանն ավելի շատ հայտնի է իր բառարանով՝ «Արդի հայերենի բացատրական բառարան», որում տրված ներածությունն արդեն հայերենի բառապաշարի ինքնատիպ և նորովի տեսություն էր, որն էլ հիմք դարձավ նրա բառագիտության բառապաշարի բաժնի համար: Խոշոր լեզվաբանը, տասնամյակներով քաղել-քարտավորելով մեր բառամթերքի միավորները, հայոց բառուբանի մշակութային խորքերն էր թափանցել, և իր տասնամյակների քրտնաջան աշխատանքի շնորհիվ բառապաշարի անօրինակ տեսական քննության բարձրակետին հասավ՝ դասդասելով հայերենի բառերը մի քանի շերտով՝ միաժամանակ տալով աշխարհաբարի բառապաշարի պատմական նկարագիրը: Սա նորություն էր ո՛չ միայն հայ լեզվաբանական իրականության մեջ: Այդպիսի քննություն արված չէ և ո՛չ մի լեզվով գրված բառային միավորների բազմության համար: Բայց բառարանի գիտականությունը չի սահմանափակվում բառապաշարի նոր ու անզուգական տեսության մշակմամբ: Ակնհայտ գիտականություն ունի յուրաքանչյուր բառահոդված՝ հասկացությունների սահմանման՝ զարմացնելու աստիճանի ճշգրտությամբ, սեղմությամբ ու պարզությամբ:

Մի քանի տասնամյակ Աղայանը դպրոցական քերականության դասագրքերի հեղինակ եղավ Հ. Բարսեղյանի գրչակցությամբ: Եվ հիմա վերապատմում եմ Հ. Բարսեղյանի պատմությունը նոր դասագիրք ստեղծելու մի դրվագի մասին: Հ. Բարսեղյանի պնդմամբ՝ գրական արևելահայերենի ուղղախոսության հիմնադիրը Է. Աղայանն է: Նախքան դասագիրք գրելը նա տասնյակ բառերի ցուցակ է կազմում, բազմացնելով բաժանում գրողներին, բանաստեղծներին, հայերենին լավ տիրապետող այլ ոլորտների բազմաթիվ մասնագետների (որոնք, իրոք, բազմաթիվ էին ժամանակին), ուսուցիչներին, ուսանողներին՝ խնդրելով ներկայացնել, թե ինչպես են արտասանում ցուցակագրված բառերը: Բառիս բուն իմաստով Է. Աղայանը կատարում է համալեզվաբանական և վիճակագրական հետազոտություն: Տվյալները ի մի բերելիս միանգամից պարզում է, որ բաղաձայնների խլացված արտասանություն ունեցող մտավորականները ժամանակի հանրահայտ ուսուցիչ Սիմակի երբեմնի աշակերտներն են: Մի կողմից՝ այդ խլացումը լեզվի արտասանության և գրության մեծ տարբերություն է առաջացնում, մյուս կողմից՝ այդպիսի արտասանության է տիրապետում համբավավոր մտավորականների մի հոծ բազմություն, որն անկարելի էր անտեսել: Եվ ահա կարողանում է մի միջին ելք գտնել և հենց այդպես էլ կանոնարկում է հայերենի գրական արտասանությունը: Հ. Բարսեղյանը տեղեկացնում է, որ սկզբնական շրջանում՝ մի քանի տարի, դասագրքերում ուղղախոսությունը ներկայացվում էր առանձին բաժնով՝ ուղղագրությունից անջատ: Հետագայում մեթոդական նկատառումներով այդ երկու բաժինը դպրոցական նյութերում միավորվում է մեկ բաժնի մեջ: Այս հատվածը հատուկ էլ մանրամասնորեն գրեցի՝ ցույց տալու, թե ինչ պատասխանատվություն են ունեցել մարդիկ դասագիրք գրելիս, որը, մեղմ ասած, շա՜տ է հեռու մերօրյա «շուկայական» փնթիությունից:

Աղայանը ոչ միայն շատերիս արժանավոր ուսուցիչն է, այլև իր սիրելի ուսուցչի՝ Հրաչյա Աճառյանի արժանավոր աշակերտը, որը պատվով տարավ մինչև վերջ՝ ոչ միայն պարբերաբար անդրադառնալով նրա արած-թողածին, այլև հենց աշակերտի խոնարհությամբ հսկայական ժամանակի վատնումով մեկը մյուսի հետևից լույս աշխարհ բերելով Աճառյանի «Հայերեն արմատական բառարանի» քառահատորյակն ու «Հայերենի լիակատար քերականության» բազմահատորյակը՝ հաճախ ծավալուն առաջաբաններով ու ծանոթագրություններով, որոնք ինքնին գիտական արժեք են: Ի դեպ, Աճառյանը հենց միայն Աղայանին էլ վստահել էր այդ գործը: Ամենայն հավանականությամբ այս ծավալուն աշխատանքի պահանջած տևական ժամանակն էր պատճառը, որ նա այդպես էլ չկարողացավ ավարտին հասցնել (նույնիսկ կեսի կեսին չհասավ) իր՝ ութ գրքով նախատեսված «Գրաբարի քերականությունը», որի միայն առաջին հատորը լույս տեսավ, որը հենց միայն իրենով չափազանց արժեքավոր ուսումնասիրություն է, որ ուղղակի կարելի է համարել լեզվաբանական թեորեմների ժողովածու:

Լինելով ընդհանուր լեզվաբանության մասնագետ և մշտապես հետևելով համաշխարհային լեզվաբանության ձեռքբերումներին՝ Աղայանը ոչ միայն ինքն է հայերենի ուսումնասիրությունները կատարում ընդհանուր լեզվաբանության մեջ մշակված մեթոդներով, այլև գրքերից մեկի առաջին գլուխն ամբողջությամբ նվիրում է Խ. Միության մեջ ժամանակին արգելված կառուցվածքային լեզվաբանության հայեցակարգերին, յուրացնում է դրանք ստեղծագործաբար և իր հետազոտությամբ ցույց տալիս, թե ինչպես պետք է կատարեն հենց հայերենի ուսումնասիրությունը հայ մասնավոր լեզվաբանության մասնագետները՝ ետ չմնալու համար ժամանակի գիտական բարձր պահանջներից: Չափազանց կարևոր է ընդհանուր և մասնավոր լեզվաբանական գիտակարգերի համընթաց քայլը, որոնց ներդաշնակությունն այսօր, ավա՜ղ, խախտված է մեծ չափով Էդուարդ Աղայանի և Գևորգ Ջահուկյանի հեռանալուց հետո:

Աղայանի սիրելի սաներն էին իր ամբիոնի տաղանդավոր փիլիսոփա-լեզվաբաններ Էդմոն Ավետյանը և Էդուարդ Աթայանը, որոնք նաև մտերիմ ընկերներ էին և Լևոն Ներսիսյանի հետ նախանձելի եռյակ միություն էին: Խորհրդային բռնատիրությունն աչքը չէր կտրում այլախոհ Ավետյանից, որը պատանի տարիքում հորն աքսորելու և տաժանակրության մատնելու համար անանուն սպառնալից նամակներ է գրել Ստալինին: Բազմաթիվ առիթներ են եղել նրան ձերբակալելու, Էդուարդ Աղայանը միշտ (բացի 1982-ից), օգտագործելով իր հեղինակությունը, կարողացել է փրկել նրան, անգամ ձերբակալումից կարճ ժամանակ անց՝ ազատ արձակել տալ: Այդ նույնն անել չկարողացավ, ավա՜ղ, 1982 թվականին՝ Բրեժնևի մահվան օրը, երբ միաժամանակ կալանավորեցին Ռաֆայել Պապայանին (հետագայում ՀՀ Սահմանադրական դատարանի դատավորներից էր), վրացի երկրաբան Գեորգի Խոմիզուրուն և Էդմոն Ավետյանին, որին շուտով տևական ժամանակով փոխադրեցին Սևանի հոգեբուժարան... Ավետյանին կալանավորելուց հետո ՊԱԿ-ը Աղայանից բնութագիր է պահանջում: Աղայանն ընտիր բնութագիր է տալիս: Երկրորդ անգամ է ՊԱԿ-ը բնութագիր պահանջում՝ հուշելով, թե իրականում ինչ տիպի գրի: Աղայանը նախորդից ավելի՛ փառաբանող բնութագիր է ուղարկում...Թեժ պայքար է մղել Աղայանը նաև Աթայանի համար (սրա մասին տե՛ս հոդվածագրի «Ազգ»-ում 2022-ի փետրվարի 18-ի հրապարակումը-խմբ.)

ԽՍՀՄ արտաքին գործոց նախարար Մոլոտովը թուրքերի հետ հերթական սիրախաղի մի բարձրակետում, երբ սրանք ակնարկում են հայկական հողերի ճակատագրի մասին և խորհրդային պետության վերաբերմունքն են փորձում կռահել, Մոլոտովը հանգստացնում է.

-Դուք հանգի՛ստ եղեք, ես հայ ժողովրդի անունից այդ հողերը նվիրում եմ Թուրքիային...

Պետական համալսարանի կուսկազմակերպության մի ժողովի ժամանակ, երբ մի բարձրաստիճան պաշտոնյա ներկայացնում է ԽՍՀՄ արտաքին քաղաքականությունը՝ իր «մարդասիրությամբ»՝ մեջբերելով Մոլոտովի խոսքը, Աղայանը պոռթկում է տեղից.

-Իսկ ո՞վ է իրավունք տվել Մոլոտովին հայ ժողովրդի անունից հայկական հողերը նվիրելու մեր թշնամուն...

Սա էլ թող լինի ի գիտություն Հայաստանի՝ «խաղաղության դարաշրջան» տարփողող մերօրյա առաջնորդների...

# «Կատարյալ ապուշը». նոր սիրային կատակերգություն

Երեւանի բոլոր կինոթատրոններում մարտի 21-ից կցուցադրվի «Կատարյալ ապուշը» ռոմանտիկ կատակերգությունը: Նոր ֆիլմի մասին «**Ազգը**» զրուցել է ֆիլմի ռեժիսոր, սցենարի հեղինակ, դերասան **Տիգրան Նալչաջյանի** հետ:

«Ֆիլմի սցենարը գրել եմ 2022 թ. ամռանը, հետո մի քանի ամիս մշակել եմ այն: Մինչ այդ կար այլ ֆիլմ նկարելու ցանկություն, որի սցենարը պատրաստ էր, սակայն ունեի ներքին զգացողություն, որ այս պահին ցանկանում եմ նկարահանել որեւէ յուրահատուկ եւ տարբերվող ֆիլմ` կատակերգական ժանրով», - պատմում է Տիգրանը` հավելելով, որ այդպիսի ֆիլմ նկարահանելն իր վաղեմի իրազանքն էր, իսկ ֆիլմի սցենարը գրելու հարցում իրեն շատ է օգնել երկարատեւ այցը Լոռվա լեռներ:

Ֆիլմի նկարահանումներն սկսվել են 2023 թ. ամռանը, ֆիլմի վրա աշխատել է պրոֆեսիոնալ անձնակազմ, դերերում ճանաչված եւ սիրված դերասաններ են: «Դերասանների ընտրությունը կատարվել է կերպարային համապատասխանությամբ, նրանց որակներն ու տաղանդը գնահատելով: Այս ֆիլմում վատ խաղացող դերասան չկա, անգամ էպիզոդիկ դերերում»,- ընդգծում է Տիգրանը:





Պատմության գլխավոր հերոսը Տիգրիսն է, որին մարմնավորում է հենց ինքը` Տիգրանը. «Նա շատ բարի ու դրական կերպար է, որը շարունակ ձգտում է փոխել աշխարհը դեպի լավը, մարդկանց միջից հանել չարությունը, ինչի պատճառով ընկնում է շատ ծիծաղելի արկածների մեջ: Ամեն անգամ հայտնվում է տարբեր իրադարձությունների կիզակետում` հանցագործների մոտ, ոստիկանությունում, կրոնական կազմակերպությունում, ծեծկռտուքներում եւ այլն»:





Հետաքրքրական ու նուրբ սիրո պատմությունը ամբողջացնում ֆիլմը: Ռեժիսորը վստահ է, որ երկրի համար այս ծանր ժամանակաշրջանում այս ֆիլմը, բացի հաճելի ժամանց պարգեւելուց, կլինի նաեւ հույսի ու բարության փոքրիկ կղզյակ հանդիսատեսի համար: Ֆիլմը պարզ է, հեշտ ընկալելի, կան տողատակի ասելիքներ, որոնք ըստ ռեժիսորի` հանդիսատեսը առանց դժվարության կընկալի:

Երկար տարիներ զբաղվելով մարտարվեստով` Տիգրանն ինքն է ֆիլմերում բարդ հնարքները անում, իսկ վերջին օրվա հետաքրքրական նկարահանումներից մի դրվագի մասին սիրով պատմեց մեզ. «Պետք է չափազանց բարդ հնարք անեի, որի նմանը հայկական կինոյում դեռ չէր եղել: Մի ոտքս պետք է դնեի ավտոմեքենայի վրա, մի ոտքս էլ մնար գետնին: Մեքենան պետք է ընթանար եւ բացվեր իմ շպագատը ու այդպես ինձ քաշելով տաներ»: Նրա խոսքից պարզվում է, որ այդ նկարահանումը հատուկ վերջին օրվա էին թողել, որպեսզի եթե գլխավոր հերոսը վնասվածք ստանար, մնացած նկարահանման օրերը չտուժեին: Ամեն ինչ բարեհաջող է անցել, առանց որեւէ վնասվածքի, իսկ այդ կադրը տեղ է գտել թրեյլերում:

«Վստահ եմ, որ բոլորը դահլիճից դուրս են գալու հաճելի զգացողություններով, ժպիտները դեմքներին: Սա այն ֆիլմերից է, որը կսիրի հանդիսատեսը: Անձամբ ես շատ մեծ հույսեր ունեմ այդ առումով: Այսպիսի ֆիլմ ստեղծելու նպատակն, ինչպես արդեն ասացի, մեր քաղաքացիների ընկճված վիճակն է, պետք է նրանց դուրս բերել այդ վիճակից: Կինոն մեծ ազդեցություն ունի եւ կարող է նպաստել դրան», - ամփոփում է ռեժիսորը:

**ԱՆՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
**ՀՊՄՀ լրագրության բաժնի ուսանողուհի**
**Լուսանկարները տրամադրել է Տիգրան Նալչաջյանը**

# Գյումրիի դարբնության ավանդույթը ՅՈՒՆԵՍԿՕ-ի ցանկում

«Գյումրիի դարբնության ավանդույթը» հայտը գրանցվել եւ ներառվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ներկայացուցչական ցանկում: Որոշումը կայացվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության մասին» կոնվենցիայի 18-րդ միջկառավարական նստաշրջանում, որը տեղի է ունեցել 2023թ. դեկտեմբերի 4-9-ին` Բոտսվանայի Կասանե քաղաքում:

Հայտը նստաշրջանում ներկայացվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության կողմից: Հայտի փաթեթում կարեւոր տեղ ունի հատուկ գրավոր ձեւաչափը, որտեղ ներկայացվում է արժեքի բնութագիրը:





Այս հետազոտության գիտական արդյունքը եղել է Գյումրիի դարբնության ավանդույթի` որպես ոչ նյութական մշակութային արժեքի` միջազգային չափանիշներին համապատասխանող բնութագիրը ներկայացնող տեքստի կազմումը: Ներկայացվել են քաղաքային դարբնության առանձնահատկությունները, արհեստի զարգացման եւ ժառանգականության դրսեւորումների կարեւորությունը, ինչպես նաեւ սերնդեսերունդ արհեստը փոխանցելու մշակութային համատեքստը: Ներկայացված աշխատանքի կարեւոր գիտական արդյունքներից է նաեւ Գյումրի քաղաքի դարբնության ինքնատիպությունը ներկայացնող մշակութային նրբերանգների վերլուծությունը:

«Գյումրիի դարբնության ավանդույթը» հայտի պատրաստումը եւ դրա համար անհրաժեշտ հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՍՆ-ի եւ «Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական արվեստների թանգարանի» պաստվերի եւ այն վավերացնող մասնագիտական ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակներում:

**ՍՏԵՓԱՆ ՊԱՊԻԿՅԱՆ**

ՀԱՍՄԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

# Հայ երաժշտարվեստի գեղոնների՝ օրորերգության նմուշների նոր «կյանքը»

*Հայկական հին, ներկայումս՝ հազվադեպ կատարվող կամ միայն բանահավաքչական նյութերում պահպանված օրորոցայինների՝ երկու տասնյակից ավելի գեղոնների հավաքածու է առանձին խտասալիկով ներկայացրել օպերային մեներգչուհի, ՀՀ վաստակավոր արտիստ, Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի դասախոս Մագդա Մկրտչյանը: Սա երգչուհու իրականացրած ծագրերից հերթականն է: Նախորդիվ նա երեւանյան հանդիսականի առջեւ հանդես էր եկել իտալանական երգարվեստի՝ մեզանում երբեւէ չհնչած ստեղծագործությունների կատարմամբ, եւ այդ համերգային երեկոյին նաեւ անդալուզյան օրորոցային էր հնչել: Հերթը հիմա հայկականներինն էր: Երաժշտասեր հանրությանը Մ. Մկրտչյանը «Հայկական օրորների գանձարան» անվանյալ խտասալիկը համերգ - զրույցով կներկայացնի մարտի 29-ին Ալ. Սպենդիարյանի օպերայի եւ բալետի ակադեմիական թատրոնի հանդիսությունների սրահում:*

Եթե ուզում ես բացահայտել որեւէ ժողովրդի հոգու ծալքերը, լեզվամտածողության ինչ-ինչ շերտեր, լսիր նրա աշխատանքային երգերն ու օրորոցայինները, որոնցում խտացված են երջանկության, սիրո, կյանքի ճշմարտության եւ երազների միահյուս պատկերացումները՝ մեղեդիների ու խոսքի ներդաշնակ հյուսքերով: Մինչ օրորոցայինների այս հավաքածու - խտասալիկի լույսընծայումն ինձ հայտնի էր մեր հորովելների չքնաղ նմուշները վերջին տարիներին հետեւողականորեն բացահայտելու, մշակելու հանգամանքը: Մարդկային մի կյանքը բավական չէ այդ ողջ հարստությունն ամբողջապես մշակելու համար՝ տարիներ առաջ մեր զրույցներից մեկին փաստել է մաեստրո



*ՀՀ վաստակավոր արտիստ, օպերային երգչուհի Մագդա* ***Մկրտչյան***

**Սեդրակ Երկանյանը**: Ըստ տարածաշրջանների՝ հորովելները «քարտեզագրելու» նրա հետեւողական ջանադրության շնորհիվ այսօր հայ բեմին հնչում են հայ հնագույն երաժշտարվեստի գանձարանի թանկարժեք նմուշներ: Հենց նույն գանձարանից է Մագդա Մկրտչյանը քաղել օրորոցային երգերը, որոնք, ենթադրում եմ, նույնպես մեծ քանակ են կազմում, բովանդակությամբ եւ զգացմունքի տարողությամբ նույնքան խորն ու լեցուն են, եւ ուրեմն, վաղուց է հասունացել դրանց «երկրորդ շնչառություն» տալու, բեմ բարձրացնելու, հայ հանրության սեփականությունը դարձնելու, նաեւ օտարազգիներին մեր արվեստի դարավոր արմատները ցուցանելու պահանջը: Արդի հայ հանրության գեղագիտական ճաշակը վերափոխելու, վերաձեւելու ուղիղ ճանապարհը հենց մեր երաժշտարվեստի նաքրամաքուր աղբյուրներից բխող մեղեդահյուսքերը, բանարվեստը հանրամատչելի դարձնելն է, եւ շնորհակալ է նրանց գործը, ովքեր հանդես են գալիս այդ առաքելությամբ:




*«Հայկական օրորների գանձարան» խտասալիկը*

Երբ Մագդա Մկրտչյանը ձեռք էր մեկնում հայկական օրորոցայինների նյութի ուսումնասիրությանը, չէր էլ պատկերացնում, թե որքան ծավալուն նյութ կհայտաբերի իր համար: Հիմա, երբ արդեն իր երգացանկում հինգ տասնյակ օրորներ ունի, խոստովանում է, որ ամեն անգամ զարմանք եւ հիացմունք է ապրել՝ հերթական երգը «պեղելիս»: Չէ՞ որ դրանց խոսք ու մեղեդին հորինել են հասարակ գեղջկուհիները, հայ մայրերը, եւ դրանցից յուրաքանչյուրն արվեստի գործ է՝ մնայուն եւ անկրկնելի: «Ժողովրդի տաղանդի, շնորհի արտահայտություններ են, որոնց մեջ խտացված են մեր պատմությունը, կենցաղավարության դրվագները, տվյալ անձի տրամադրությունը, հույզն ու հոգսը, որոշ դեպքերում՝ տագնապները, մի այլ դեպքում՝ խաղաղ հրճվանքը եւ այլն,- ասում է երգչուհին:- Օրորները նաեւ մեր պատմությունն ուսումնասիրելու յուրատիպ ուղեցույց են. դրվագ առ դրվագ, պատկեր առ պատկեր հասկանում ես այն ժամանակաշրջանը, որում ապրել են այդ օրորներն արարողները: Խոսում են ծնողի՝ իր զավակին տրված պատգամները, առաջին հայացքի՝ պարզ, բայց այնքա՜ն զգայացունց, բազմաշերտ են քնքշանքի արտահայտությունները: Շարունակում եմ աշխատանքը Կոմիտասի օրորներն ամբողջականորեն ներկայացնելու ուղղությամբ, շարունակելու եմ օրորոցայինները «պեղելու» եւ դրանցով հայեցի դաստիարակություն տալու իմ աշխատանքը: Դրանք արդեն իսկ ուսուցողական նյութ են դարձել Անահիտ Ցիցիկյանի անվ. երաժշտական դպրոցում, որտեղ ուսուցանում եմ:

Օրորներում երբեմն նորարարություններ եմ ներմուծում: Օրինակ, Ակնի օրորում մենախոսում եմ՝ դրանով խորացնելով ստեղծագործության հուզականությունը, հզորացնելով հանդիսականին հաղորդվող զգացմունքային լիցքը: Սկսյալ անհիշելի ժամանակներից՝ միշտ եւ ամենուրեք, որտեղ եղել է ծնունդ եւ օրոց, հնչել է օրորոցային երգը, որով հայ կինն իր սիրասուն մանկան գովքն է արել, արտահայտել իր սերն ու գորովը»:

Մագդա Մկրտչանի հետ զրույցին տեղեկացա, որ «Հայկական օրորների գանձարան» խտասալիկով ներկայացնում է պատմական Հայաստանի տարբեր բնակավայրերը՝ Տարոնը, Վանը, Սասունը, Շատախը, Ակնը, Մոկսը եւ այլն: Ինձ համար նորություն էր, որ օրորներ երգել են նաեւ պապերը: Դրանցից է Սասնա օրորը.

*«Ռուրի գենիմ՝ դու զորենաս,*
*Դու պըզդիկ իս, բարով մեծնաս:*
*Ռուրի գենիմ, իմ պըզդիկին,*
*Անդրանիկի քաջ զինվորին:*
*Հարավ քամին զքի օրորը,*
*Ռուրի, ռուրի, ռուրի, լաո՛:*
*Վերին Աստված, կարմիր արեւ,*
*Զքի հով էնը, ռուրի, լաո՛»:*

# Եվրոպայի ամենաաստեղծարար եւ փնտրված դաշնակահարուհիներից մեկը՝ Մարիաննա Շիրինյանը Պրահայում. Գրիգին հաջորդեց Բաբաջանյանը

*Մարտի 11-ին Պրահայի ֆիլհարմոնիայի՝ Ռուդոլֆինումի պատմական դահլիճում հնչեց Առնո Բաբաջանյանի «Էլեգիան»՝ դանիաբնակ հանրահայտ դաշնակահար* **Մարիաննա Շիրինյանի** հոգեպարար կատարմամբ: *Տաղանդավոր հայ դաշնակահարուհին այդպիսով իր հայկական ողջույնը հղեց դահլիճին, որը չդադարող ծափերով ընդունել էր նրա փառահեղ ելույթը՝ Չեխիայի ռադիոյի սիմֆոնիկ նվագախմբի հետ նորվեգացի մեծ կոմպոզիտոր Էդվարդ Գրիգի դաշնամուրի եւ նվագախմբի կոնցերտի կատարումը: Համերգից առաջ տեղի ունեցավ երաժշտասերների հանդիպումը էստոնացի անվանի դիրիժոր Օլարի Էլտսի եւ Մարիաննա Շիրինյանի հետ: Համերգը նգիրված էր Չեխական ռադիոյի 100-ամյակին, որին նվագախումբն անդրադարձավ համերգի առաջին բաժնում՝ կատարելով չեխ կոմպոզիտոր Լուկաշ Հուռնիկի այդ առիթով գրված «Ռադիո» սիմֆոնիկ ստեղծագործությունը, որն ընդգրկում էր չեխ եւ միջազգային հայտնի ստեղծագործությունների մեղեդիներ:*

*Գրիգի՝ Դաշնամուրի եւ նվագախմբի համար գրված կոնցերտի կատարումը համերգի գագաթնակետն էր, թեեւ երկրորդ բաժնում դեռեւ պետք է հնչեր Սիբելիուսի 5-րդ կոնցերտը: Մարիաննա Շիրինյանը երաժշտական աշխարհում համարվում է այս կոնցերտի լավագույն կատարողներից մեկը, եթե չասենք՝ լավագույնը: Եվ Գրիգի բնական ու սահուն ներկայացումը գրավեց խստապահանջ հանդիսատեսին, որն էլ պատասխանեց իր ծափողջույններով ու «բրավո»ներով: Համերգին նախորդած հանդիսատես-երաժիշտներ հանդիպմանը Մարիաննան չթաքցրեց, որ ներկայացնելու է Գրիգի իր մեկնաբանությունը, որ նորվեգիական երաժշտությունը կարեւոր տեղ ունի իր ստեղծագործական կյանքում: Նաեւ հիշեցնելով իր հայկական արմատների մասին, նա շեշտեց, որ գրիգյան հայրենաբաղձության մոտիվներն իրեն հիշեցնում են Հայաստանը՝ իր հայրենիքի կարոտը: Այն հոգեհարազատ է իրեն, եւ խորհրդանշական է, որ այժմ բնակվելով Կոպենհագենում, իր տունը հեռու չէ այն շենքից, որտեղ ապրել է եւ 24 տարեկանում այդ կոնցերտը գրել Գրիգը: Մեզ հետ զրույցում Մարիաննան ասաց.*«Իմ հոգում Գրիգի կոնցերտը շատ կարեւոր տեղ է գրավում: Ես այն նվագել եմ հաճախ եւ ունեմ շատ առանձնահատուկ կապ այդ գործի հետ: Տարիների ընթացքում իմ կապը Նորվեգիայի, այնտեղի երաժշտական ավանդույթների, ժողովրդական երաժշտության հետ շատ սերտացել է: Դա առանձնահատուկ մի լեզու է, որ սերտ կապ ունի Նորվեգիայի բնության եւ ավանդույթների հետ: Ինձ համար շատ հետաքրքիր մի անկյուն է, որ ես սիրով հետազոտել եմ: Ուրախ եմ ներկայացնել չեխական հանդիսատեսին այդ հրաշք կոնցերտը»: Մեր կողմից ավելացնենք, որ ոչ միայն կոնցերտն էր հրաշք, այլեւ Շիրինյանի կատարումը: Այնպիսի տպավորություն էր, որ այդ գործի հեղինակը դաշնակահարն է:



Հայ դաշնակահարուհին իր գոհունակությունը հայտնեց նաեւ Չեխիայի ռադիոյի սիմֆոնիկ նվագախմբի մասին: Մեզ հետ զրույցում նա խոստովանեց, որ Պրահայում նվագում է առաջին անգամ: «Մեծ ուրախությամբ սպասում եմ իմ հանդիպմանը Չեխական ռադիոյի նվագախմբի եւ չեխական հանդիսատեսի հետ: Ունեմ չեխ երաժիշտ շատ ընկերներ եւ անչափ հարգում ու սիրում եմ չեխական երաժշտական ժառանգությունը: Չեխիայում տարիներ առաջ նվագել եմ Պլզենի սիմֆոնիկ նվագախմբի հետ՝ Գերշվինի «Rhapsody in blue»-ն»,- ասաց նա:

Ավելացնենք, որ Մարիաննա Շիրինյանը ծնվել է Երեւանում՝ երաժիշտների ընտանիքում, ավարտել է Չայկովսկու անվան երաժշտական դպրոցը, մասնագիտական բարձրագույն կրթությունը ստացել է Գերմանիայում, ապա հաստատվել Դանիայում եւ ելույթներով հանդես է գալիս ոչ միայն Սկանդինավյան երկրներում, այլեւ աշխարհի տարբեր համերգային դահլիճներում: Ունի թողարկած բազմաթիվ ձայնասկավառակներ, դասավանդում է Օսլոյի երաժշտական ակադեմիայում, պրոֆեսոր է:

Ինչպես բնութագրում է Պրահայի համերգի առիթով տպագրված գրքույկը, Մարիաննա Շիրինյանը համարվում է Եվրոպայի ամենաստեղծարար եւ ամենափնտրված դաշնակահարներից մեկը: Նրա երաժշտականությունը եւ վիրտուոզ կատարումը, ինչպես նաեւ հոյակապ տեխնիկան վայել է իրական դասական երաժշտին:

**ՀԱԿՈԲ ԱՍԱՏՐՅԱՆ**
**Պրահա**

# Երրորդ աչք

*Երբ փակեցի երկու աչքերս,*
*որ չտեսնեմ ակնհայտը,*
*ճակատիս բացված երրորդ աչքով*
*սկսեցի տեսնել այն,*
*ինչ մինչեւ այդ աննկատ էր*

## Իսկ Փառանձեմը դեռ ծիծաղում ու ծիծաղում է



Շատ ուրախ ժողովուրդ ենք մենք՝ հայերս, ինչ խոսք:

Մեզ հետ ինչ ասես, որ չեն անում՝ սպանում են, դավաճանում են, կոտորում են, խաբում են, տեղահանում են, օր-օրի նոր հարկեր ու պատիժներ են մոգոնում մեզ համար, իսկ մեր պետքն էլ չէ, սրամտում ու ծիծաղում ենք:

Մի կողմից դա, իհարկե, այնքան էլ վատ չէ.գործում են օրգանիզմի ինքնապաշտպանական մեխանիզմները եւ փրկում են մեզ դեպրեսիայի մեջ ընկնելուց: Սակայն երրորդ աչքով դիտելիս հասկանում ես, որ իրավիճակը գնալով լրջանում է, իսկ մեզ լրջացնելու հնար կարծես թե ոչ մի կերպ չի գտնվում:

Ասում ենք՝ «առանց հումորի անհնար է», «հումորն օգնում է ապրել», «ամենաահավոր բանը հումորի զգացում չունեցող մարդն է» ու շարունակում ենք զվարճանալ:

Չգիտեմ՝ ով եւ ինչու է մեզ համոզել, որ անընդհատ պետք է սրամտենք ու ծիծաղեցնենք ինքներս մեզ եւ ուրիշներին: Այդ համատարած ուրախությունն ավելի տարօրինակ է դառնում ճակատագրական պահերին, որոնց պակասը վերջին շրջանում չունենք: Պատերա՞զմ է՝ մենք մի քանի օր լուրջ ենք, հետո սկսում ենք կատակել այդ թեմայով, ինչ-որ տեղ ծա՞ռ են կտրում, շե՞նք են քանդում, մարդկանց զրկում են ունեցվածքի՞ց, մենք ամենուր սրամտելու առիթ ենք գտնում: Անգամ ամենասարսափելի իրադարձություններից շատ կարճ ժամանակ անց հայտնվում են սրամիտ աղջիկներ ու տղաներ (ընդ որում՝ տարիքը կապ չունի, նրանք կարող են լինել 15-ից 105 տարեկան) ու սկսում են կատակել, սրամտել ու զվարճանալ:

Իսկ վերջին տարիներին, երբ համացանցը մեր կյանքում հսկայական տեղ սկսեց զբաղեցնել, համատարած զվարճանքը դարձավ անտանելի ու կործանարար:

Պատերազմի ողջ ընթացքում, օրինակ, մինչ հեռատես մարդիկ խելագարվում էին սարսափի կանխազգացումից, մի ողջ ժողովուրդ, համակարգչի առաջ նստած, «Իլյուշ, Իլյուշ» էր անում: «Իլյուշ մենք սուրճ ենք խմում, իսկ դու տխրիր» ոճի հումորն այդ օրերին չգիտես ինչու ահավոր զվարճալի էր թվում մեր հայրենակիցներին, ու այդ համատեքստում բոլորն իրենց լուման էին ձգտում ներդնել: Ադրբեջանի նախագահը տալիս էր գյուղերի անուններ, որոնք գրավել էին նախորդ օրերին, իսկ մեր համերկրացիները, որոնք ամեն երեկո հավատում էին «արծրունիովհաննիսյանական նորություններին», սկսում էին ծաղրել «Իլյուշին» նոր ուժով (հետագայում իհարկե, երբ պարզ դարձավ, որ Արծրունը ստում էր, իսկ Ալիեւը ցավոք սրտի՝ ոչ, հումորն արդեն հակառակ վեկտորն ուներ՝ «Ես այժմ գտնվում եմ Երեւանում (Հադրութում), եւ այստեղ ոչ մի ադրբեջանցի չկա» ոճով):

Ինչո՞ւ եմ օրինակները հենց պատերազմի օրերից բերում: Որպեսզի պարզ դառնա, որ մենք հաճախ փորձում ենք սրամտել այնպիսի դեպքերում եւ առիթներով, երբ այդ սրամտությունը ոչ միայն տեղին չէ, այլեւ կարող է վտանգավոր լինել: Օրինակ, նույն պատերազմի օրերին, երբ երեկոյան ասուլիսների ընթացքում լրագրողները, հավանաբար ունենալով որոշ ճշգրիտ տեղեկատվություն, փորձում էին Արծրունուց ինֆորմացիա ստանալ կոնկրետ տարածքների վերաբերյալ, նա ամեն անգամ հայտարարում էր, որ պետք չէ իրեն կոնկրետ հարցեր տալ: Եվ մեր շատ ուրախ եւ շատ սրամիտ հանրությունն անմիջապես սկսում էր սրամտել այն թեմայով, թե ինչ անհասկացող են մեր լրագրողները, որոնք փորձում են Արծրունուց իմանալ իրականությունը, երբ մարդը պարզ լեզվով հայտարարում է, որ տեղեկություններ չի տալու եւ կոնկրետ հարցերի չի պատասխանելու: Այսինքն մարդիկ, որոնք տեղյակ չէին լրագրողի աշխատանքի նրբություններին, չգիտեին, թե ինչն է մտնում լրագրողի իրավունքների ու հատկապես նրա պարտականությունների մեջ, փորձում էին ծաղրել այդ մասնագիտության ներկայացուցիչներին իրենց մասնագիտական պարտքը կատարելու՝ այսինքն կոնկրետ եւ ճշգրիտ տեղեկատվություն ստանալու եւ այդ տեղեկատվությունը հանրությանը հասցնելու ցանկության համար:

Հետագայում, երբ պարզ դարձավ, որ լրագրողների հարցերը տեղին էին, իսկ իրենց հումորը, մեղմ ասած, անպարկեշտ, նման ձեւով իրենց սրտերը հանող մեր հայրենակիցներից եւ ոչ որի մտքով չանցավ ներողություն խնդրել անտեղի սրամտությունների համար: Իսկ Արծրունին համարեցին ստախոս, առանց անգամ հասկանալու, որ խաբում են հիմնականում նրան, ով ինքն էլ դեմ չէ, ավելին՝ ուզում է խաբված լինել:

Դեպքերից տարիներ են անցել, բայց հիմա էլ կարծես թե շատ բան չի փոխվել. շարունակում ենք կատակել, երբ տարածաշրջանում եւ երկրում խիստ վճռորոշ իրադարձություններ են սպասվում ու պետքներս էլ չէ: Ընդ որում կատակում ենք բոլորս՝ նրանք, ում թվում է, թե հասկանում են ինչ-որ բաներից, որոնցից իրականում չեն հասկանում, նրանք, ում թվում է, թե իրենք հումորի զգացում ունեն, իսկ իրականում՝ չունեն, նրանք, ում թվում է, թե ազատամիտ են, մինչդեռ իրականում բռի են ու անկիրթ:

Օրինակ, Ջիլիզան վրացիներին հանձնելու լուրի առիթով կատակում են, թե «լավ է, ջիլիզացիները առանց վիզայի կկարողանան մեկնել Եվրոպա»: Նույնն է, թե երկու ոտքը գանգրենայի արդյունքում անդամահատվածի մոտ սրամտես՝ «լավ է, որ ոտքերդ կտրեցին, պրծար կոշիկ գնելուց, չկա՛ ոտք, չկա՝ կոշիկ»: Մինչդեռ գանգրենան գնալով առաջադիմում է ու արդեն այլ՝ առավել կենսական օրգաններ է վնասում: Ու վաղը այդ «գանգրենան» կարող տարածվել դեպի ձեր բնակավայրը, ու դուք կքնեք մի պետությունում, իսկ կարթնանաք լրիվ այլ երկրի կազմում:

Ծիծաղելն, իհարկե, երբեմն վատ բան չէ, բայց գուցե մեկ-մեկ իրո՞ք կարիք կա լրջանալու: Օրինակ, Մարուքյանի հրաժարականից հետո համընդհանուր հումորի ու հռհռոցի մթնոլորտում կարծես ընդհանրապես աչքաթող արեցինք այն հարցը, որ եթե մինչեւ այս պահը իշխանության որեւէ քայլի ու յուրաքանչյուր զիջման հետ հաշտ է եղել Մարուքյանը, հիմա ի՞նչ եղավ, ինչի՞ առաջ է հայտնվելու մեր պետությունը, ի՞նչ նոր զիջումների ենք պատրաստվում, որ «հատուկ հարցերով»-ը գերադասեց հատուկ հրաժարական տալ:

Մեկ-մեկ իրոք ծափն ու ծիծաղը չափից դուրս շատ են, անհիմն ու անտեղի, ինչպես մահացածի տանը դագաղի կողքին կանգնածի անկեղծ զվարճությունը կարող է անտեղի լինել:

Այդ անզուսպ ու անտեղի հումորից ավելի վատ կարող է լինել միայն չհիմնավորված ու անտեղի լաց ու կոծը, պատկերավոր ասած՝ «մեր հին սազի ողբանվագ, լացակումած լարը...»: Բայց դա արդեն բոլորովին ուրիշ ու շատ ավելի տխուր պատմություն է:

**Ռ. Ա.**

# Աշխարհում ամենաշատ խոսվող առաջին 10 լեզուները




Լեզուների տարածման ու զարգացման հարցերի քննությամբ ու վիճակագրությամբ զբաղվող եվրոպական Էթնոլոգ (Ethnologue) կազմակերպությունը վերջերս հրապարակեց ամենամյա իր հետազոտությունների արդյունքները, ըստ որոնց 2023 թ.ին աշխարհի ամենաշատ խոսվող առաջին 10 լեզուները հետեւյալներն են.

1- Անգլերեն՝ 1 մլրդ. 452 մլն. մարդ:
2- Մանդարին՝ 1 մլրդ 38 մլն. մարդ:
3- Հինդի՝ 602 մլն. մարդ:
4- Իսպաներեն՝ 598 մլն. մարդ:
5- Ֆրանսերեն՝ 309 մլն. մարդ:
6- Արաբերեն՝ 274 մլն. մարդ:
7- Բենգալերեն՝ 273 մլն. մարդ:
8- Պորտուգալերեն՝ 263 մլն. մարդ:
9- Ռուսերեն՝ 258.2 մլն. մարդ:
10- Ուրդու՝ 231 մլն. մարդ:

Վիճակագրությանը ուղեկցող բացատրականի մեջ Էթնոլոգի հետազոտողները մատնանշում են լեզուների տարածվածության պայմանավորված լինելը մի շարք գործոններով՝ տվյալ երկրի տարածքի ծավալով, ազգաբնակչության թվով, տնտեսական ազդեցիկությամբ, գործածելիության առանձնահատկություններով ու նաեւ նախկին գաղութների առկայությամբ:

Օրինակ՝ անգլերեն լեզվի տարածվածությունը պայմանավորված է հիշյալ գործոնների պայմանների առկայությամբ, բայց նաեւ այն հանգամանքով, որ այն դարձել է բիզնեսի եւ քաղաքականության լեզու:

Ինչ վերաբերում է մանդարին կամ ավելի հաճախ՝ չինա-մանդարին կոչվող լեզվին, ապա այն ունի տիբեթյան ծագում եւ որպես առանձին բարբառ ամենատարածվածն է Չինաստանում:

Հինդի կամ հինդու լեզուն, նույնպես, ամենատարածվածն է Հնդկաստանում օգտագործվող ավելի քան 20 բարբառների մեջ: Բարբառներ՝ որոնք տեղ-տեղ անհասկանալի են այլ բարբառով խոսող հնդիկների համար, որոնք միմյանց հետ հաղորդակցվելու համար դիմում են իրենց երկրի նախկին գաղութարարի լեզվին՝ անգլերենին:

Տեղեկացնենք, որ բենգալերենը օգտագործվում է Հնդկաստանի որոշ մասերում ու հարակից երկրներում, իսկ ուրդու լեզուն՝ հիմնականում Պակիստանում:

Էթնոլոգի մասնագետները միաժամանակ կանխատեսել են, որ ամենաշատ խոսվող լեզուների առաջին տասնյակի ներկա պատկերը տեւական չէ. 2050 թ.ին, պնդում են նրանք, առաջին տեղը գրավող անգլերենը իր տեղը զիջելու է չինարենին (չինո-մանդարին) եւ նույնիսկ իսպաներենին:

**ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ**

# Կարո՞ղ են երկրները գոյատեւել առանց պաշտպան պետությունների

**ՍՈՒՐԵՆ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ**
*Միջազգայնագետ, ԱՄՆ արտաքին քաղաքականության փորձագետ*

Հետեւելով աշխարհաքաղաքական ներկա գործընթացներին կարելի է հանգել այն եզրակացության, որ աշխարհում համարյա չկա մի երկիր, որը չունենա այսպես կոչված մի «մեծ եղբայր», կամ մի պաշտպան պետություն, որ երաշխավորում է նրա ֆիզիկական անվտանգությունը եւ տնտեսական ու քաղաքական համակարգի անխախտելիությունը:

Հայտնի է, որ միջազգային հարաբերությունների ներկա համակարգում քաղաքական գլխավոր դերակատարները կամ հսկա տերությունները Մ. Նահանգները, Չինաստանն ու Ռուսաստանն են: Նրանք են համարվում միջազգային քաղաքականության «գլխավոր լիգան» կազմող գերտերությունները: Եվ իրոք, դժվար է պատկերացնել, որ Իսրայելը, օրինակ, կարողանար ապահովել իր անվտանգությունը առանց Մ. Նահանգների շարունակական աջակցության, կամ թե ինչ կպատահեր Բելառուսին` առանց Ռուսաստանի հովանավորությանը որպես միութենական պետություն, կամ Հյուսիսային Կորեային` առանց Չինաստանի գործակցության: Սա անշուշտ, չի նշանակում, որ Իսրայելը, Բելառուսը կամ Հյուսիսային Կորեան գոյություն չէին ունենա, այլ այն, որ նրանք իրենց այսօրվա կարգավիճակում չէին լինի, որ կարողանային դերակատարություն ունենալ իրենց տարածաշրջանների անվտանգության խնդիրներում:

Ընդարձակելով խնդրի քննարկման շրջանակները` տեսնում ենք, որ նույնիսկ չեզոք համարվող երկրները, ինչպիսիք են Ավստրիան եւ Շվեյցարիան, մեծապես գտնվում են ՆԱՏՕ-ի եւ համաեվրոպական անվտանգության համակարգի հովանու ներքո, որը վերահսկվում է ԱՄՆ-ի կողմից:

Մյուս կողմից, կան նաեւ որոշ երկրներ, ինչպիսիք են Հնդկաստանը, Իրանը եւ Թուրքիան, որոնք քիչ թե շատ անկախ են գործում, բայց միեւնույն է` գտնվում են այն ընդհանուր անվտանգության համակարգում, որն ստեղծել ու պահպանում են վերոնշյալ «գլխավոր լիգայի» մասնակիցները: Եվ նույնիսկ եթե նրանց դիտարկենք որպես «բացառություններ», դրանք կազմում են այն անհրաժեշտ բացառությունները, որոնք հաստատում են ընդհանուր օրենքը: Այնպես որ, աշխարհի բոլոր երկրները կա՛մ ունեն իրենց «մեծ եղբայրը», կա՛մ էլ գտնվում են «հովանավորների ակումբի» կազմավորած քաղաքական հավասարակշռության համակարգում:

Հետաքրքրական է այն, որ Իրանը, Հնդկաստանը, Թուրքիան եւ նրանց նմանները թեեւ «մեծ եղբայրներ» ունեցողների խմբին չեն պատկանում, բայց իրենք էլ ունեն իրենց «փոքրիկ եղբայրները», որոնց պարտավոր են հոգ տանել, որովհետեւ այդ «փոքր եղբայրները» գտնվում են միջազգային քաղաքականության համընդհանուր համակարգում:

Հարավային Կովկասը բացառություն չի կազմում: Կարելի է, օրինակ, Մ. Նահանգները համարել Վրաստանի «մեծ եղբայրը»: Ադրբեջանի «մեծ եղբայրը» անշուշտ Թուրքիան է, բայց Ադրբեջանը ամեն ջանք գործադրում է, որ հավասարակշռված հարաբերություններ պահպանի նաեւ Ռուսաստանի հետ, այսինքն փորձում է ունենալ երկու «մեծ եղբայր» միաժամանակ: Ինչ վերաբերում է Հայաստանին, 2018-ի իշխանափոխությունից եւ հատկապես 2020-ի պատերազմից հետո, հայտնի չէ, թե ունի՞ արդյոք «մեծ եղբայր», թե՞ որոնումների մեջ է:

Դեպի Արեւմուտք (ԱՄՆ) եւ Եվրոպա շրջադարձը եւ լարվածությունը Ռուսաստանի հետ հարաբերություններում ապացուցում են, որ Հայաստանը դեռեւս իր տեղը չի գտնում այն ներկա միջավայրում, որ հայտնվել է: Երեւանը երկընտրանքի առաջ է կանգնած կարծես եւ բոլորովին կարեւոր չէ, թե ում մեղքով կամ պատճառով Ռուսաստանի հետ ռազմավարական հարաբերությունները հասան ներկա իրավիճակին: Փաստն այն է, որ Հայաստանը չունի աշխարհաքաղաքական մի հովանավոր, որն անվտանգության երաշխիքներ կարողանար ապահովել: Այս բացը, անշուշտ, չի կարող երկար տեւել, եւ Հայաստանը, ի վերջո, հարկադրված է լինելու ընտրություն կատարել աշխարհաքաղաքական կենտրոնների միջեւ: Այլապես, նախապատրաստված մի որոշում է պարտադրվելու Հայաստանին, որից, դժբախտաբար, խուսափել չի կարողանալու: Եվ դարձյալ այդ որոշումը չափազանց ցավալի է լինելու: Հայաստանի միակ տարբերակը հնարավորինս արագ կողմնորոշվելն է եւ ամբողջական կործանումից խուսափելու համար հստակ քայլեր ձեռնարկելը միանալու այս կամ այն աշխարհաքաղաքական կենտրոնին, լինի այն Վաշինգտոնը, Մոսկվան, թե Պեկինը:

Անգլ. բնագրից թարգմանեց`
ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ
(The Armnenian Mirror-Spectator)

# Ընդդեմ Հայաստանի ՄԻԵԴ դիմած Փաշինյանը պատրաստ է հրաժարվել «Ընդդեմ Ադրբեջանի» հայցերից

Բաքվի ճնշմամբ` Երեւանն Ադրբեջանին սիրաշահելու հերթական քայլին կարող է դիմել: Խոսքը միազգային հարթակներից ընդդեմ հարեւան երկրի ներկայացված հայցերը հետ կանչելու մասին է: Այդ մասին օրերս տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ վարչապետ **Նիկոլ Փաշինյանն** էր հայտարարել` ակնարկելով, որ եթե Հայաստանն ու Ադրբեջանը խաղաղության պայմանագիր կնքեն, երկուստեք պետք է հրաժարվեն միմյանց նկատմամբ դատական հայցերից:

Փաշինյանի հայտարարությունը ոչ միայն խնդրահարույց, այլեւ վտանգավոր են համարում իրավապաշտպաններն ու մարդու իրավունքներով զբաղվող կազմակերպությունները: «Ինչ լսել եմ, փորձում եմ հասկանալ, վերլուծել, եզրակացնել` ինչպե՞ս է իշխանության գլխում նման միտք ծագել»,- «**Ազգ**»-ի հետ զրույցում ասում է «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ նախագահ **Արաքս Մելքոնյանը**:

Իրավապաշտպանը վստահ է` եթե Հայաստանը որոշի հետ կանչել ընդդեմ Ադրբեջանի հայցերը, դա ազդակ կլինի թե՛ Հայաստանի քաղաքացիների, թե՛ Ադրբեջանի, թե՛ աշխարհի համար: «Հայաստանի քաղաքացիներին ուղիղ կասվի` մեք ձեր հարցերով չենք զբաղվում, ձեր խախտված իրավունքները մեզ չեն հուզում: Բացի այդ, ընդդեմ Ադրբեջանի գործերով անցնող Հայաստանի քաղաքացիներն ու նրանց իրավահաջորդները շատ դեպքերում այլեւս չեն կարողանա ինքնուրույն դիմել Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Այս քաղաքականությունը կհանգեցնի անպատժելիության` մարդկության դեմ հանցագործությունների առումով: Հայաստանն Ադրբեջանին կասի` ազատ եք: Այսինքն` կստեղծի հիմք Ադրբեջանի կողմից նոր հանցագործությունների համար: Ինչ վերաբերում է աշխարհին, ապա դա կարող է անդրադառնալ Հայաստանի` դատական համակարգի հեղինակության ու վարկի վրա»,- մեզ հետ զրույցում մեկնաբանեց իրավապաշտպանը:

Մելքոնյանն առավել քան վստահ է` երեխաներին մանկապարտեզից հայատյացություն դաստիարակող վայ-հարեւանին Հայաստանի որդեգրած «բարի կամքը» չի սիրաշահելու: Ավելին` Բաքուն մտածելու է` քանի դատող կամ պատասխանատվության կանչող չկա, իրագործի այն, ինչ ցանկանում է` մարդու իրավունքների կոպտագույն խախտումներով:

Փաշինյանի` ՄԻԵԴ ու Արդարադատության միջազգային դատարաններից դատական հայցերը հետ կանչելու որոշումները մեզ հետաքրքրական մի դրվագ հիշեցրեց. 2022-ի հունվարի 18-ին ՄԻԵԴ-ը հրապարակել էր «Փաշինյանն ընդդեմ Հայաստանի» հայցադիմումն ու ամրագրել` 2009-ի քաղաքական իրադարձութուններից հետո խախտվել է այն ժամանակ ընդդիմադիր քաղաքական գործիչ Նիկոլ Փաշինյանի` «ազատության եւ անձնական անձեռնմխելիության իրավունքը»:

Ստացվում է` ՀՀ վարչապետը դեմ չէ ՄԻԵԴ-ին դիմել ընդդեմ Հայաստանի գործերով, բայց Ադրբեջանին պատասխանատվության կանչելու ժամանակ որոշում է առաջնորդվել «բարի կամք» դրսեւորելով:

ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

# Ընդդեմ Հայաստանի ՄԻԵԴ դիմած Փաշինյանը պատրաստ է հրաժարվել «Ընդդեմ Ադրբեջանի» հայցերից

Բաքվի ճնշմամբ` Երեւանն Ադրբեջանին սիրաշահելու հերթական քայլին կարող է դիմել: Խոսքը միազգային հարթակներից ընդդեմ հարեւան երկրի ներկայացված հայցերը հետ կանչելու մասին է: Այդ մասին օրերս տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ վարչապետ **Նիկոլ Փաշինյանն** էր հայտարարել` ակնարկելով, որ եթե Հայաստանն ու Ադրբեջանը խաղաղության պայմանագիր կնքեն, երկուստեք պետք է հրաժարվեն միմյանց նկատմամբ դատական հայցերից:

Փաշինյանի հայտարարությունը ոչ միայն խնդրահարույց, այլեւ վտանգավոր են համարում իրավապաշտպաններն ու մարդու իրավունքներով զբաղվող կազմակերպությունները: «Ինչ լսել եմ, փորձում եմ հասկանալ, վերլուծել, եզրակացնել` ինչպե՞ս է իշխանության գլխում նման միտք ծագել»,- «**Ազգ**»-ի հետ զրույցում ասում է «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ նախագահ **Արաքս Մելքոնյանը**:

Իրավապաշտպանը վստահ է` եթե Հայաստանը որոշի հետ կանչել ընդդեմ Ադրբեջանի հայցերը, դա ազդակ կլինի թե՛ Հայաստանի քաղաքացիների, թե՛ Ադրբեջանի, թե՛ աշխարհի համար: «Հայաստանի քաղաքացիներին ուղիղ կասվի` մեք ձեր հարցերով չենք զբաղվում, ձեր խախտված իրավունքները մեզ չեն հուզում: Բացի այդ, ընդդեմ Ադրբեջանի գործերով անցնող Հայաստանի քաղաքացիներն ու նրանց իրավահաջորդները շատ դեպքերում այլեւս չեն կարողանա ինքնուրույն դիմել Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Այս քաղաքականությունը կհանգեցնի անպատժելիության` մարդկության դեմ հանցագործությունների առումով: Հայաստանն Ադրբեջանին կասի` ազատ եք: Այսինքն` կստեղծի հիմք Ադրբեջանի կողմից նոր հանցագործությունների համար: Ինչ վերաբերում է աշխարհին, ապա դա կարող է անդրադառնալ Հայաստանի` դատական համակարգի հեղինակության ու վարկի վրա»,- մեզ հետ զրույցում մեկնաբանեց իրավապաշտպանը:

Մելքոնյանն առավել քան վստահ է` երեխաներին մանկապարտեզից հայատյացություն դաստիարակող վայ-հարեւանին Հայաստանի որդեգրած «բարի կամքը» չի սիրաշահելու: Ավելին` Բաքուն մտածելու է` քանի դատող կամ պատասխանատվության կանչող չկա, իրագործի այն, ինչ ցանկանում է` մարդու իրավունքների կոպտագույն խախտումներով:

Փաշինյանի` ՄԻԵԴ ու Արդարադատության միջազգային դատարաններից դատական հայցերը հետ կանչելու որոշումները մեզ հետաքրքրական մի դրվագ հիշեցրեց. 2022-ի հունվարի 18-ին ՄԻԵԴ-ը հրապարակել էր «Փաշինյանն ընդդեմ Հայաստանի» հայցադիմումն ու ամրագրել` 2009-ի քաղաքական իրադարձութուններից հետո խախտվել է այն ժամանակ ընդդիմադիր քաղաքական գործիչ Նիկոլ Փաշինյանի` «ազատության եւ անձնական անձեռնմխելիության իրավունքը»:

Ստացվում է` ՀՀ վարչապետը դեմ չէ ՄԻԵԴ-ին դիմել ընդդեմ Հայաստանի գործերով, բայց Ադրբեջանին պատասխանատվության կանչելու ժամանակ որոշում է առաջնորդվել «բարի կամք» դրսեւորելով:

ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

## Իմաստաբանական բառարան

### *Քնենք բաց աչքերով*

**2008 թվականին մարդիկ աշխարհում խոր քնից արթնացան, ու հանկարծ որոշեցին, որ յուրաքանչյուր տարի` գարնանային գիշերահավասարին նախորդող ուրբաթ օրը նշելու են «Քնի համաշխարհային օրը» *(World Sleep Day)*:**

**Իսկ 2012 թվականին «Քնի խանգարումների հայկական ասոցիացիան» *(Armenian Sleep Disorders Association)* մեզ էլ «քնահարամ» արեց` առաջարկելով միանալ այս կարեւոր արշավին: Մենք էլ աչքներս տրորելով` միացանք դրան:**

**Հիմա, երեւի մենք էլ անքնությամբ տառապող մյուս առաջադեմ մարդկանց նման, այս տարի մարտի 15-ին մեծ շուքով ու խանդավառությամբ պիտի նշենք «Քնի համաշխարհային օրը» :**

**Մի տեղ կարդացել եմ, որ քունը բնորոշ է բոլոր կաթնասուններին, թռչուններին, ձկներին, միջատներին, նաեւ մարդկանց: Բայց դրանցից յուրաքանչյուրն իր հանգիստն ապահովելու հարցում սեփական նախընտրանքն ունի:**

**Օրինակ, ձին կանգնած է քնում, նապաստակը` աչքերը բաց: Աֆրիկյան փղերը նույնպես քնում են կանգնած` բայց կնճիթով փաթաթվում են ծառի բնին: Օձերը քնած ժամանակ չեն թարթում իրենց թափանցիկ կոպերն ու նապաստակի նման բաց աչքերով են քնում:**

**Նման վարքագիծը պայմանավորված է էվոլյուցիոն պատճառներով. կանգնած դիրքից ու աչքերը բաց վիճակում հնարավոր է լինում միանգամից կողմնորոշվել ու վազել գիշատիչներից պաշտպանվելու համար: Այսպիսով բոլորն էլ քնելիս մտածում են իրենց անվտանգության մասին, բոլորն էլ գոյաբանական հարց են լուծում:**

**Բայց կա մի ճշմարտություն, որի մասին ոչ մի «ասոցիացիա» մեզ չի զգուշացնում: Մեզ չեն հուշում, որ գարնանը, եղանակային բարենպաստ պայմանների սպասող դարանակալ թշնամին, գերադասում է չքնել, բայց ոչ թե պաշտպանվելու, այլ իր երազած ծրագրերն իրականացնելու համար: Իսկ մենք ոչ միայն չենք մտածում միջավայրի գիշատիչներից պաշտպանվելու եւ երկրում տիրող քաղաքական իրավիճակի մասին, այլեւ ընդառաջ ենք գնում «Քնի խանգարումների հայկական ասոցիացիայի» առաջարկին, ու հենց գարնանը նշում «Քնի համաշխարհային օրը», ձգտելով ապահովել մեր խաղաղ քունը:**

**Հիշենք Պարույր Սեւակին, որ խորհուրդ էր տալիս գարնանը չքնել`**

***Քունս չի տանում,***
***Դու էլ մի քնիր,***
***Հետս էլ կրկնիր,***
***Որ Հայաստանում***
***Հիմա գարունը***
***Բացվել է արդեն...***

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

# Ռուբեն Գալչյան. Քարտեզներով պայքար՝ հորինված պատմության դեմ

***Քարտեզագիտության եւ մշակույթի պատմության անվանի հետազոտող Ռուբեն Գալչյանը պատասխանում է Պրահայում (Չեխիա) լույս տեսնող «ՕՐԵՐ» ամսագրի հիմնադիր եւ գլխավոր խմբագիր ՀԱԿՈԲ ԱՍԱՏՐՅԱՆԻ հարցերին***

*Ռուբեն Գալչյանը ծնվել է Իրանի Թավրիզ քաղաքում, գաղթական հայերի ընտանիքում, ովքեր 1915 թվականին փախել էին Վանից՝ փրկվելով Ցեղասպանությունից եւ Իրան ժամանելով Հայաստանի, Վրաստանի եւ Ֆրանսիայի միջոցով: Թեհրանում դպրոց հաճախելուց հետո Ռուբենը կրթաթոշակ ստացավ Մեծ Բրիտանիայում սովորելու համար: 1963 թվականին ավարտելով Բիրմինգհեմի Աստոնի համալսարանը՝ ստացավ ճարտարագետի կոչում: Նա աշխատել է գազի եւ նավթաքիմիական արդյունաբերություններում, սակայն Գալչյանի հետաքրքրությունը աշխարհագրության եւ քարտեզագրության նկատմամբ սկսվել է դեռ վաղ տարիքից: Իսկ լրջորեն ուսումնասիրել է այս թեման 1970-ականներից: 1981 թվականին նա ընտանիքի հետ տեղափոխվել է Լոնդոն, որտեղ նրան հասանելի են եղել քարտեզագրական բազմազան նյութեր: Նրա առաջին գիրքը՝ «Հայաստանի պատմական քարտեզները. քարտեզագրական ժառանգությունը» (I. B Tauris, London, 2004) վերնագրով պարունակում է քարտեզների եւ Հայաստանի քարտեզների հավաքածու, որն ընդգրկում է 2600 տարվա ժամանակաշրջան, քարտեզներ՝ որոնք նա հավաքել է աշխարհի տարբեր գրադարաններից: Նա մոտ տասը քարտեզագրական ու պատմական գրքերի հեղինակ է: Գալչյանը օտարալեզու տարբեր ամսագրերում տպագրված մի շարք քարտեզագրական հոդվածների հեղինակ է: Նա բազմաթիվ դասախոսություններ է կարդացել Եվրոպայում, ԱՄՆ-ում, Իրանում եւ Հայաստանում: Հայկական պատմական քարտեզագրությանը մատուցած ծառայությունների համար նա 2008թ. նոյեմբերին արժանացել է ՀՀ ԳԱԱ պատվավոր դոկտորի կոչման: 2009թ. եղել է «Վազգեն Ա» մշակութային նվաճումների մեդալակիր: Նա ամուսնացած է, ապրում է Լոնդոնում ու Երեւանում:*

**-Պարոն Գալչյան, ինչպե՞ս նախաձեռնեցիք Հայաստանի քարտեզների գիրքը:**

- Ճիշտն ասած՝ դպրոցական տարիքից հետաքրքրված եմ եղել քարտեզագրությամբ եւ քարտեզներով: Թավրիզում, որտեղ ծնվել եմ, մեր տան պատին Եվրոպայի քարտեզ կար: Հիշում եմ, հայրս ռուսական ռադիոն լսելով, քարտեզի վրա գծում էր, թե պատերազմի գիծը որտեղ է: Երկրորդ համաշխարհային պատերազմի օրերն էին: Այդ քարտեզից սկսվեց իմ հետաքրքրությունը քարտեզների նկատմամբ: Իհարկե, դպրոցական տարիներին փորձում էի քարտեզներով հետաքրքրվել, բայց Պարսկաստանում տարբեր քարտեզներին ծանոթանալու այդքան մեծ հնարավորություն չկար: Պարսկաստանի հեղափոխությունից հետո տեղափոխվեցի Անգլիա, ուր վեց ամսով աշխատանքի էին հրավիրել եւ այդ վեց ամիսը դարձավ 40 տարի:

**-Ո՞ր բնագավառում էիք ուսանում կամ աշխատում, եթե չեմ սխալվում նավթարդյունաբերության ոլորտում էիք:**

- Նախ բարձրագույն ուսումս ստացել էի այստեղ՝ Անգլիայում, մասնագիտությունս էլեկտրոնիկ ինժեներություն էր: Հետո վերադարձել էի Պարսկաստան եւ աշխատում էի նավթագազային եւ նավթաքիմիական արդյունաբերության մեջ՝ նավթային ընկերությունում: Դա 1964-1980 թվականներին էին: Իսկ պատերազմից հետո, երբ արդեն գործ չկար, ինձ աշխատանքի հրավիրեցին Լոնդոն: Իմ գալուց հետո Իրան-Իրաք պատերազմը սկսվեց ու այդպես էլ մնացի Լոնդոնում:

Անգլիայում արդեն առիթ ստեղծվեց ծանոթանալու ամբողջ աշխարհի քարտեզագրական մշակույթին: Միայն Բրիտանական գրադարանում 4,5 միլիոն քարտեզ կա: Այդ տարիներից սկսեցի մանրակրկիտ ուսումնասիրություններ կատարել: Նայում էի այդ հին միջնադարյան քարտեզները եւ զարմանում, թե ինչ բարձր որակի արվեստի աշխատանքներ կան դրանց մեջ, եւ ափսոսում էի, որ շատ մարդ դրանցից տեղյակ չի: Եւ սկսեցի նյութեր հավաքել, գրքեր կարդալ: Այժմ մոտ 300 հատոր քարտեզագրության գրքեր ունեմ, որոնք բոլորն իմ քարտեզների հավաքածուի հետ միասին 2013 թ. նվիրել եմ Մատենադարանին:

Ընդհանրապես, քարտեզների մասին գրքեր տպագրելու գաղափարն սկսվեց ընկերոջիցս՝ Շահենից, ով նախ առաջարկեց օրացույց տպագրել: Այդպիսով լույս տեսավ քարտեզներով մեծ օրացույցը, որը մեծ հաջողություն ունեցավ: Այնուհետեւ մի երեք տարի աշխատելուց հետո, նա առաջարկեց, որ պատկերագիրք հրատարակեմ: Այդպես 2004 թ. անգլերենով լույս տեսավ **«Հայաստանը միջազգային քարտեզագրության մեջ»** գիրքը: Շատ հետաքրքիր քարտեզներ կան դրանց մեջ: Այն դարձավ իր տեսակի մեջ բեսթսելլեր, իսկ հաջորդ տարի՝ 2005-ին Հայաստանում հրատարակվեց գրքի ընդլայնված տարբերակը՝ թարգմանված ռուսերենի եւ հայերենի: Այստեղ բերված քարտեզների օրինակները մաս են կազմում միջազգային քարտեզագրական մշակույթի՝ մ. թ. 500-600 տարի առաջվա քարտեզներից մինչեւ այսօր: Դրանք ներառում են ե՛ւ հունա-հռոմեական շրջանը, ե՛ւ իսլամական, վաղ քրիստոնեական, միջնադարյան շրջանները մինչեւ այսօր: Այս հրատարակության նպատակն էր ցույց տալ, թե օտար աշխարհագրագետներն ու քարտեզագետները ինչպես են ներկայացրել Հայաստանը:

**-Քանի՞ քարտեզ եք ընդգրկել:**

-Մոտ 130 քարտեզ:

**-Որո՞նք են մեր ամենահին քարտեզները, եւ ի՞նչ զարգացում է ապրել հայ քարտեզագրությունը:**

- Հայերենով հնագույն աշխարհագրական երկը միջնադարյան «Աշխարհացույցն» է, որն արդեն ամենուր տպագրվել է, եւ որը պարունակում է գրավոր բացատրություններ աշխարհի, տարբեր երկրների, եւ հատկապես Հայաստանի եւ հարակից երկրների մասին: Դրանից առաջ մեզ չի հասել որեւէ այլ քարտեզագրական փաստաթուղթ:

Հայերեն հնագույն քարտեզը դա մի փոքրիկ աշխարհացույց բոլորակ է, պատրաստված անանուն հեղինակի ձեռքով, հավանաբար Կաֆֆայում: Դրանից շուրջ 3 դար անց կա մի այլ քարտեզ, որը 1990 թվականին Բոլոնիայի համալսարանի գրադարանում գտնված «1691» թվակիր հայերեն ձեռագիր քարտեզն է՝ պատրաստված Պոլսում՝ Երեմիա Չելեբի Քյոմուրճյանի ձեռքով: Այդ քարտեզը շատ մեծ է եւ ունի 120x320 սմ չափ, ուր ներկայացված են բոլոր հայկական կարեւոր եկեղեցիներն ու վանքերը՝ սկսած Արցախից մինչեւ Պոլիս: Քարտեզը նաեւ պարունակում է մանրամասն բացատրություններ՝ նշված կարեւոր վանքերի ու եկեղեցիների մասին, հատկապես նրանց, որոնք գտնվում էին Օսմանյան կայսրության սահմաններում:



Այնուհետեւ առաջին հայատառ տպագիր քարտեզը՝ 1695-ին Ամստերդամում հրատարակված «Համատարած Աշխարհացույցը», որը չնայած հնագույն հայկական քարտեզը չէ, սակայն առաջին հայերեն տպագիր քարտեզն է եւ ունի հույժ կարեւոր դեր մեր քարտեզագրական ոլորտում: Սա, իրականում հայերեն հնագույն տպագիր աշխարհացույցն է, պատրաստված արեւմտյան քարտեզագրական ոճով եւ կերպարանքով, որոնք հիմնականում գործածվում են մինչեւ օրս: 1747 թ. Վենետիկում լույս է տեսել Համատարած «Աշխարհացույցի» պարզեցված եւ փոքրադիր տարբերակը: 1751 թ. Վենետիկում լույս է տեսել պատմական Հայաստանի քարտեզը, ըստ հին եւ նոր քարտեզագետների եւ աշխարհագրագետների, որը կարելի է համարել Շիրակացու «Աշխարհացույցի» բացակայող քարտեզին փոխարինողը:

19-րդ դարում Վենետիկում հրատարակվել է շուրջ 15 քարտեզ, որոնցից ամենակարեւորներից է 1849 թ. Փարիզում փորագրված եւ Վենետիկում տպագրված «Աշխարհացույց պատկերաց ըստ Արքունի աշխարհագրաց Գաղղիոյ, Անգլիոյ, Գերմանիոյ եւ Ռուսաց» ատլասը, փորագրված Յովհաննն Ամիրայ Տատեանի ծախսով:

19րդ դարում մեծ թվով քարտեզներ են պատրաստվել եւ հրատարակվել Վիեննայի Մխիթարյան միաբանության տպարանում, սկսելով եվրոպական մի քանի երկրների քարտեզներով, իսկ 1850 թ. այստեղ հրատարակվեց առաջին հայկական գունավոր գլոբուսը, որն ունի շուրջ 60 սմ տրամագիծ եւ տեղադրված էր փայտե եռոտանու վրա: Գլոբուսի հեղինակներն էին Արսէն Այտընեանը եւ Հ. Պալճեանը:

Մինչեւ Հայաստանի խորհրդայնացումը Եվրոպայի տարբեր քաղաքներում, ինչպես օրինակ Բազելում, Բեռլինում, Փարիզում եւ Պոլսում հրատարակվել են հայերեն քարտեզներ, իսկ 19-րդ դարի կեսերին Ցարական Ռուսաստանում հայերի հրատարակած քարտեզներն ընդհանրապես ռուսերենով էին: Առաջին հայալեզու քարտեզներն սկսեցին հրատարակվել 1882թ.ին հիմնականում Թիֆլիսում, ապա մինչեւ 1910 թ. դրանք հրատարակվել են մեծ մասը Թիֆլիսում, մի քանիսն էլ Բաքվում:

1904 թ. Ժնեւի Հայ ուսանողների միությունը հրատարակել է Հ.Պ. Մանիսաչեանի պատրաստած «Հայաստան եւ Հարեւան երկրներ» կոչված մանրակրկիտ քարտեզը:

Քսաներորդ դարասկզբում հայերեն ձեռագիր քարտեզներ է պատրաստել վանեցի Մկրտիչ Խերանյանը, որոնցից մեծ մասը գծված են մեծ հոգատարությամբ եւ գեղեցիկ կերպով ներկայացված են կտորի վրա:

Խորհրդային կարգերի ընթացքում հայկական քարտեզագրությունը վերելք է ապրել: 1923-1940 թթ. Երեւանում լույս է տեսել ավելի քան 90 բազմատեսակ հայերեն քարտեզ, որոնց մեծ մասը վերաբերում են ԽՍՀՄ-ի տարածքին ու 15 հանրապետություններին:

**-Ո՞րն էր այս քարտեզներում ամենակարեւորը, որը դուք համարում եք արժեքավոր:**

- Ինձ համար ամենակարեւորն այն է, որ բոլոր քարտեզներում, նույնիսկ, երբ Հայաստանն իբրեւ անկախ պետություն գոյություն չի ունեցել, քարտեզագետներն այդ շրջանը կոչել են Հայաստան: Նաեւ նկատել եմ, որ մինչեւ միջնադար 13-14րդ դարեր, ընդհանրապես սահմաններ չկային երկրների միջեւ: Նշվում էին կա՛մ ժողովուրդների անունները, կա՛մ ուղղակի երկրների՝ առանց սահմանների: Քանի որ այն ժամանակ սահմանները շատ փոփոխական էին, հաճախ էին իշխանները հարեւանների հողերը գրավում եւ հստակ սահմաններ չկային: Քանի որ այդ տարածքում ապրում էր հայ ժողովուրդը, ապա այդ պատմական տարածքը նրա անունով մնաց մինչեւ 1925 թվականը: Այդ տարիների ամերիկյան հանրագիտարաններում դեռեւս Հայաստանի տեղում գրված է Արմենիա: Չնայած այդ ժամանակ հայերին արդեն բնաջնջել էին այդտեղից, բայցեւայնպես գրում էին: Մինչեւ որ Աթաթուրքը պարտադրեց, որ այդ տարածքի վրա այլեւս Հայաստան չգրեն, քանի որ Ցեղասպանության հետեւանքով, այդտեղ այլեւս հայեր չկային: Ու այդ ժամանակ էր, որ որոշեցին ամբողջ Թուրքիայի այդ տարածքը Անատոլիա կոչել: Մինչդեռ Անատոլիան այսօրվա Թուրքիայի երկու երրորդն է, միայն՝ 60 տոկոսը: Ցավոք, ամերիկահայ որոշ պատմաբաններն էլ ասում են Հայաստանը Անատոլիայի արեւելքում է, փոխարենը ասեն, որ Հայաստանը Անատոլիայից Արեւելք գտնվող տարածքն է:

**-Ի՞նչ տարածում ստացավ այդ գիրքը:**

-Այս գիրքը շատ վաճառվեց: Դեռեւս 2012 թվականին 3000ից անցել էր սրա վաճառքը, մինչդեռ ընդհանրապես նման գրքերը մինչեւ 200 օրինակ են վաճառվում: Քանի որ աշխարհում նման գրքեր քիչ են գնում, ըստ իմ անգլիացի հրատարակչի գիրքս բեսթսելլեր էր դարձել: Բացի այն, որ վաճառվում է Ամազոն կայքում, նաեւ բաժանել եմ Ամերիկայի եւ Եվրոպայի կարեւոր գրադարաններին:

**-Ինչպիսի՞ շարունակություն ունեցավ ձեր աշխատանքը:**

- Հետագայում մասնագիտացա միջնադարյան քարտեզագրության մեջ: **«Հայաստանը միջնադարյան քարտեզների մեջ»** գիրքը հրատարակվեց հայերեն եւ անգլերեն լեզուներով, որն ավելի մասնագիտական քարտեզագրական հրատարակություն է: 2007-ին հրատարակեցի **«Կովկասից հարավ երկրները միջնադարյան քարտեզներում՝ Հայաստան, Վրաստան, Ադրբեջան»** գիրքը, որտեղ նաեւ պատկերներ կան եւ որը վերլուծական պատմաաշխարհագրական տեղեկատվություն է տրամադրում ընթերցողներին այս տարածքի վերաբերյալ:

⇨7

# Ռուբեն Գալչյան. Քարտեզներով պայքար՝ հորինված պատմության դեմ

➪6 Այս գրքում ցույց եմ տվել, թե Հայաստանը որտեղ է եղել, Վրաստանը երբ է հայտնվել այս քարտեզներում, իսկ Ադրբեջանը միայն 1918 թվականին է առաջին անգամ երեւացել քարտեզներում: Դրանից առաջ Ադրբեջան անունով երկիր կոչվել է միայն Պարսկաստանի հյուսիս-արեւելյան նահանգը՝ Ատրպատական անունով:

Այդտեղ նշել եմ նաեւ այն, որ մ.թ.ա. երկրորդ դարում Ալեքսանդր Մեծի զորավարներից մեկը՝ Հերակլեսը, հասել է մինչեւ Իսպանիա վարձկան զորքերով՝ որոնց մեջ էին պարսիկները, մարերը եւ հայերը: Այս վարձկան զորքերը մնացել են այնտեղ եւ չեն վերադարձել իրենց երկրները: Հետո էլ անցել Հյուսիսային Աֆրիկա եւ այնտեղի անքաղաքակիրթ ժողովուրդներին քաղաքակրթություն են սովորեցրել եւ զարգացրել:

Դրանից հետո Արմեն Հախնազարյանի հետ խորհրդակցելով, 2009-ին հրատարակեցի ***«Հորինված պատմություն.Ադրբեջան եւ Հայաստան.Կեղծիքներ ու Փաստեր»*** գիրքը՝ անգլերեն,ապա՝ 2010-ին՝ հայերեն եւ ռուսերեն լեզուներով:

Սա ամբողջովին նվիրված է ադրբեջանական պատմական խեղաթյուրումներին, հերքում ենք նրանց կողմից տպագրված կեղծիքները: Մասնավորապես իրենք ասում են, որ հայերը ոչնչացնում են իրենց մշակույթը, իսկ մենք գրքում ցույց ենք տալիս, որ հակառակը, Ադրբեջանն է ոչնչացնում հայկական մշակույթը: 47 միջազգային քարտեզ եմ վերցրել եւ վերլուծել եմ այդ քարտեզները եւ ցույց եմ տվել, թե որտեղ կա Ադրբեջան նշված, եւ իրենց հորինած քարտեզներն եմ ցույց տվել, այդ թվում, որ Պարսկաստանի մեկ երրորդը համարում են Ադրբեջան:

**-Ադրբեջանը մեծ աշխատանք է տանում**

հակահայ քարոզչության ասպարեզում, կեղծ

գրքեր են տպագրում եւ տարածում: Ձեր կատարած աշխատանքը որքանո՞վ է հակազդում նրանց: Հայկական պատմագիտությունը խորհրդային տարիներին հոդվածների ձեւով անդրադարձել է այդ կեղծիքներին, բայց լուրջ գրքեր լույս են տեսել միայն վերջին տասնամյակներին:

-Նույնը ես եմ իմ գրքում գրել, որ սովետական տարիներին միայն հոդվածներ էին գրել, այն էլ հայերեն լեզվով, որոնք հասանելի չեն միջազգային հանրությանը: Իմ կարծիքով, դրանց անդրադարձը պետք է լինի միջազգային հարթակներում եւ անգլերեն լեզվով, որպեսզի դա հասանելի լինի օտարներին: Հարեւան հանրապետություններին թույլ չէր տրվում հրատարակել: Ես այժմ նրանց հրատարակած գրքերին եմ անդրադառնում, բայց հետաքրքրական է, որ դրանք վաճառքում չկան, իրենք բաժանում են ըստ ցանկության եւ կարիքի: Իրենց գրքերում եւ դասագրքերում գրում են, որ 5000 տարվա պատմություն ունեն եւ իրենք են քաղաքակրթություն բերել այս տարածաշրջան: Դեռեւս 2009 թվականին կարծեմ Ալիեւը իրենց ակադեմիայում պարզ ասաց, որ կպարգեւատրի նրան, ով ապացուցի, որ Արցախ-Ղարաբաղի տարածքում հայ չի ապրել: Իսկ 2012 ին արդեն ասաց, որ ուրախ է, որ իր առաջարկն ընդունվել է եւ արդեն լավ աշխատանքներ են տրագրվել այդ մասին:

Իմ գրքերից մեկում ես անդրադառնում եմ այդ պատմական կեղծիքներին: **«Պատմությունների բախումը Հարավային Կովկասում՝ Պարսկաստանի, Հայաստանի եւ Ադրբեջանի քարտեզի վերագծումը»** գիրքը նվիրված է մեր շրջանի պատմությանը: Հասկապես գրել եմ այն մասին, որ վերջին 35 տարիներին, դեռ խորհրդային ժամանակներից Ադրբեջանը աշխատել է երկու ուղղությամբ՝ հերքել, որ Կովկասի Հարավային շրջանում հայեր են ապրել որեւէ ժամանակ, երկրորդ՝ որ այդ շրջանում գոյություն ունեցած բոլոր քրիստոնեական հուշարձանները, ոչ թե հայկական են, այլ ալբանական են, Աղվանքի մշակույթին են պատկանում եւ դրանից ելնելով, իրենց ներկայացնում են իբրեւ տարածաշրջանի բնիկներ, իսկ հայերը՝ նորեկներ:

Այդ հարցին նվիրված գրքում կատարել եմ պատմական եւ քարտեզագրական հետազոտություններ, ինչպես նաեւ անդրադարձել եմ լեզվաբանական հարցերի, թե լեզուն, որ այնտեղ խոսում են, որտեղից է եկել, որ Ադրբեջանն անունը որտեղից է առաջացել եւ երբ են անվանել Արաքսից հյուսիս տարածքին՝ Ադրբեջան, այն է՝ 1918 թվականից: Իրենց ակադեմիկոսներն այս առումով երկու խմբի են բաժանվում: Մի մասն ասում է, որ մենք բնիկ թուրքեր ենք եւ պետք է մեզ կոչենք թուրք, քանի որ եկել ենք Կենտրոնական Ասիայից, մյուսներն էլ ասում են՝ «Չէ, մենք աղվանցիների շառավիղներն ենք, մենք աղվանցի պետք է կոչվենք»: Ասում են, որ աղվանցիները քրիստոնյաներ էին, եւ այս տարածքի բոլոր եկեղեցիներն ու հուշարձանները աղվանական էին:

Այստեղ պետք է նշեմ, որ 9-12դ դարից այլեւս քրիստոնյա աղվանները չնչին թիվ էին կազմում: Դրանց 95-98 տոկոսը կրոնափոխ էին եղել եւ դարձել էին մահմեդական: Մի քանի հազար ուդիներն էին, որ մնացել էին քրիստոնյա եւ մինչ օրս կան: Այսինքն 9-12 դարերից այլեւս քրիստոնյա աղվաններ չկային: Մեր եկեղեցիներն ու վանքերը հիմնականում կառուցվել այդ տարածքում 10-19-րդ դարերում: Հարց է առաջանում: Ինչպե՞ս իսլամացած աղվանները կառուցեցին քրիստոնեական եկեղեցիներ ու վանքեր: Արդյո՞ք դա հնարավոր բան էր, որ այդ գործը կատարվեր:

Հաջորդը, դիմելով միջնադարյան ճանապարհորդներին, հույն կամ այլազգի, որոնք անցել են այս շրջանով 10րդ դարից սկսած գրել են, թե ինչպես Հայաստանի գյուղերով ու քաղաքներով անցան, որ օրինակ Գյանջայում (Գանձակ), ըստ իտալացի ճամփորդների ապրում էին միայն պարսիկներ ու հայեր: Ստրաբոնը նույնիսկ գրում է, որ Աղվանքի տարածքում 26 ցեղեր էին ապրում, խոսում էին տարբեր լեզուներով: Այսօր էլ Ադրբեջանում կան դեռ այդ ցեղերից՝ թալիշեր, ուդիներ, լեզգիներ եւ այլն: Նրանց բոլորին ադրբեջանցիներ են դարձնում: Նոր շրջանի պատմության մասին խոսելիս, 17-19-րդ դարի կեսերի մասին իրենց պատմաբանները գրում են, թե որ քաղաքներն են հայաբնակ, որտեղ են հայերը բնակվել, հարկ են վճարել պարսիկ խանին, ինչպես տեղացի ժողովուրդը, որն ի դեպ գրել է պարսկերենով: Բայց թարգմանելով այդ գրքերը՝ դարձնելով ադրբեջաներեն, տառափոխելով, բոլոր հայերի անունները վերացրել են,պարզապես չեն գրել կամ նշել են որպես աղվաններ: Այսինքն այդ գրքերը կեղծելով են թարգմանել:

Կարեւոր մի բան կա, թե ինչու 1918 թվականից հետո տեղաբնակներն սկսեցին իրենց կոչել ադրբեջանցի: Այն ժամանակ երկիրը ղեկավարում էր մուսաֆաս նացիստական կուսակցությունը, ղեկավարը՝ Ռասուլզադեն, պարտադրեց, որ հանրապետության անունը դնեն Ադրբեջան, բայց ժողովուրդը մինչեւ 1936 թվական իրենն իրեն թուրք էր կոչում: Միայն կոմունիստական կուսակցության ճնշմամբ եւ պարտադրանքով, նրանց անունները փոխեցին ադրբեջանցու: Ինչո՞ւ պարտադրեցին, քանի որ Ստալինն ասում էր, որ ամեն մի հանրապետություն պետք է ունենա իր հնագույն եւ ուրույն մշակույթն ու պատմությունը: Իսկ երբ երկիրը գոյություն չի ունեցել եւ ժողովուրդն էլ եղել է հիմնականում թքախոս ցեղեր, Ադրբեջանն իր ինքնությունը պահելու նպատակով պարտադիր յուրացրել ու յուրացնում է ամբողջ տեղական մշակույթն ու պատմությունը:

Նմանապես կենտրոնական Ասիայի հին երկրները, որոնց քաղաքները պարսկական քաղաքակրթության օազիսներ էին եւ ոչ թե երկրներ, որոնք զարգացած պարսկական մշակույթի կենտրոններ էին: Կենտրոնական Ասիայում ապրում էին հիմնականում քոչվոր ցեղախմբեր, որոնք 17-18 դդ.-ից ղեկավարվում էին խաների ու էմիրների կողմից եւ հպատակվում էին Ռուսաստանին: 1926 թ. կոմունիստական գաղափարախոսության շնորհիվ այս երկրները սկսեցին ստեղծել իրենց կեղծ պատմությունը եւ յուրացնել պարսկական մշակույթը: Նույնիսկ Ստալինը մի տեղ գրել է՝ եթե պատմություն չունեք, կարող եք դա հորինել: Այդ մասին մեջբերումներ եմ արել իմ գրքում:

**-Ի դեպ, նույն կեղծիքների մասին ասում են նաեւ Վրաստանի պարագայում: Արդյո՞ք այդ շրջանն էլ ուսումնասիրում եք:**

-Տեղյակ եմ, բայց այդ թեման չեմ ուսումնասիրում: Ինձ թույլ չեմ տա առանց խորը տեղեկացվություն ունենալու այդ գործով զբաղվել: Խնդիրը շատ մանրակրկիտ հետազոտության կարիք ունի:

**- Վերջերս մի քանի լեզուներով լույս տեսան նաեւ ձեր հանրամատչելի գրքերը դպրոցական եւ հետաքրքրասեր հանրության համար. «Հայաստանի սահմանների 2600 տարվա պատմությունը»: Նկատի ունենալով, որ վերջին շրջանում Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ տեղի են ունենում սահմանազատման եւ սահմանագծման շուրջ բանակցություններ, ի՞նչ դեր կարող է կատարել այդ գիրքը այս հարցում եւ դուք ի՞նչ խորհուրդ եք տալիս, որո՞նք են Հայաստանի Հանրապետության իրական սահմանները: Բացի այդ, այդ գրքում դուք նաեւ ցույց եք տալիս նոր ժամանակներում ինչպես են փոփոխվել Հայաստանի սահմանները, Ադրբեջանի կողմից կեղծված քարտեզները եւ նոր տարածքների զավթումը:**

-Վերջին տասնամյակը Հայաստանում ապրելով անդրադարձա, որ մեր ժողովուրդը կրթություն ստանալով խորհրդային դպրոցներում, բավարար եւ ճշգրիտ տեղեկություն ու պատկերացում չունի իր երկրի աշխարհագրական պատմության եւ հատկապես սովետական օրերին կատարված իրադարձությունների մասին: Այս նյութը բացակայում է նաեւ դպրոցական դասագրքերից: Մի քանի տարի առաջ, ժամանակի Կրթության նախարարի հետ խոսելով, առաջակեցի այս նյութն անվելացնել դասագրքերում: Ինձ ընդառաջեց, բայց պաշտոնյաների անտարբերության եւ այլ պատճառներով գործն առաջ չգնաց: Ուստի որոշեցի ինքս գտնել միջոցներ եւ պատրաստել մի գիրք, որի արդյունքը եղավ ձեր վերը նշած հրատարակությունը:

Գիրքն ունի երեք հիմնական մաս: Առաջինը՝ համառոտ ներկայացնում է Հայաստանի աշխարհա-քաղաքական քարտեզագրության պատմությունը: Երկրորդ մասը ներկայացնում է Հայաստանի առկայությունը վերջին 2600 տարվա քարտեզներում, հատկապես պատրաստված օտարների ձեռքով, միաժամանակ շեշտելով դրանցում Ադրբեջանի բացակայությունը, որը տեւեց մինչեւ 1918 թ.:

Երրորդ մասը մանրամասն անդրադառնում է Հայաստանի առաջին հանրապետությանը եւ նրա խնդիրներին, ապա թե ինչպե՞ս Հայաստանի տարածքները կոմունիստական կարգերն ընդունելուց հետո Լենինի ու Ստալինի ձեռքով հանձնվեցին հարեւաններին, ապա թե ինչպե՞ս ստեղծվեցին անկլավներն ու Հայաստանի արոտավայրերը տրվեցին Ադրբեջանին: Նաեւ այն մասին, թե ինչպիսի կեղծված քարտեզներ էին ներկայացվում հանրությանը:

Բարեբախտաբար ԿԳՄՍ նախարարը գիրքս ընդունեց որպես ուսումնական նյութ եւ տվեց պատկան հրամանագիրը, որի վրա հիմնելով գրքերիցս 2000 օրինակ ուղարկեցի Հայաստանի բոլոր դպրոցներին:

**-Այդ սահմանագծման կամ սահմանազատման հանձնաժողովների նիստերին ձեզ հրավիրե՞լ են, ձեր կարծիքը հարցրե՞լ են:**

-Երկու հանդիպում եմ ունեցել, որոնցից երկրորդը արդյունավետ էր: Առաջարկ եղավ ապագայում եւս հանդիպել, որին ես ընդառաջեցի ու հայտնեցի ամեն տեսակի օժանդակության պատրաստակամությունս:

**-Ինչո՞ւ է Հայաստանի իշխանությունը ցանկանում օգտագործել 1975 թվականի խորհրդային քարտեզները, այլ ոչ թե ավելի վաղ շրջանի, որոնցում, ինչպես դուք եք քանիցս նշել, Հայաստանն ավելի պաշտպանված է եւ ոչ մի անկլավ չի եղել:**

-Նշված զինվորական քարտեզները միակն են, որոնք երկկողմ վավերացված են 1969-70թթ. և 1991 թ., սակայն, ինչպես նկատեցիք, դրանք ունեն մի քանի խնդիր:

Ա - Այդտեղ առկա են անկլավները, որոնք քարտեզի վրա երեւացել են 1936-39 թթ. առանց որեւէ հիմքի ու օրինական փաստերի ու որոշումների: Ադրբեջանը պետք է անկլավների ստանալու վերաբերյալ փաստեր ու որոշումներ ներկայացնի:

Բ - Ադրբեջանի սահմանադրական ակտի 2-րդ եւ 3-րդ հոդվածները նշում են, որ իրենք 1918-20 թթ. Ադրբեջանի ժառանգորդներն են ու Խորհրդային Ադրբեջանը չեն ճանաչում: Այս դեպքում ո՛չ իրավասու են անկլավներ պահանջելու եւ ո՛չ էլ Խորհրդային Ադրբեջանին նվիրված հայկական տարածքները պահպանելու, որոնք շուրջ 1200 քառ. կմ. են, եւ տրվել են ԽՍՀՄ-ի կողմից, իրենց չճանաչած Խորհրդային Ադրբեջանին:

Գ - 1928-36 թթ. Հայաստանից ավելի քան 1000 քառ. կմ. արոտավայր է հասկացվել Ադրբեջանին, 1923 թ. որոշմամբ երկրում Կարմիր Քրդստան գավառ ստեղծելու նպատակով, բայց երբ դրա հիմնադրումը չեղարկվեց, Հայաստանից վերցված տարածքները չվերադարձվեցին:

Ի վերջո, մենք պետք է թիրախում ունենանք՝ հասնել Սովետական Հայաստանի 1926 թ. սահմաններին, որտեղ Հայաստանի տարածքը, ըստ Խորհրդային ատլասների, 30,948 քառ.կմ. էր, իսկ Ադրբեջանինը 84,400 քառ.կմ., եւ ոչ թե 86,600: Սրանք են նաեւ այն սահմանները, որն անցյալում ՌԴ նախագահ Պուտինը հիշեցնում էր, որ միայն Մոսկվան դրանք ունի:

Կուզենայի ավելացնել, որ բացի վերոհիշյալ գրքերից, հրատարակել եմ նաև այլ գրքեր, հիմնականում քարտեզագրական ու պատմա-մշակութային նյութերով, որոնք հասանելի են իմ կայքում՝ www.roubegalichian.com.

Հարցազրույցը վարեց
ՀԱԿՈԲ ԱՍԱՏՐՅԱՆԸ
«Որեր», 9-12 (97) 2023

# Պրոֆ. Վահագն Տատրյանի արխիվի թվայնացման աշխատանքները շարունակվում են



Միչըն Հիլզից (Կալիֆոռնիա) Արարատ-Էսքիճյան թանգարան-գիտահետազոտական կենտրոնն (AEMRC) ու Կալիֆոռնիա համալսարանի «Խոստում» (Promise) հայկական ինստիտուտին կից գործող Հայոց ցեղասպանության ուսումնասիրության կենտրոնը (AGRP) տեղեկացնում են, որ Վահագն Տատրյանի արխիվի թվայնացման աշխատանքները շարունակվում են:

Պրոֆ. Վահագն Տատրյանը (1926-2019) նշանավոր ցեղասպանագետ էր եւ Հայոց ցեղասպանությունը ուսումնասիրող անխոնջ գիտնական: Նա հանդես էր եկել բազմաթիվ դասախոսություններով ու հոդվածներով, որոնք նպաստել էին Հայոց ցեղասպանության առավել լայն՝ միջազգային ճանաչմանը: Նրա արխիվային նյութերի եզակի հավաքածուն եւ այդ թեմայի վերաբերյալ հեղինակած գրքերը արտակարգ մեծ արժեք են ներկայացնում բոլոր նրանց համար, ովքեր ուսումնասիրում են մասնավորապես Հայոց ցեղասպանության սկզբնաղբյուրները եւ ընդհանրապես ցեղասպանության եւ դրա հետեւանքների դրդապատճառները:

Իր երկարամյա գործունեության ընթացքում Տատրյանը հարուստ նյութեր էր կուտակել Հայոց ցեղասպանության վերաբերյալ՝ ուսումնասիրելով աշխարհի տարբեր (ամերիկյան, բրիտանական, գերմանական, ֆրանսիական, օսմանյան եւ հայկական) արխիվները: Նրա արխիվում կան նաեւ բազմաթիվ անտիպ ձեռագրեր եւ տարբեր լեզուներով տպագրված հոդվածներ:



Նախքան իր մահը նա այս բոլոր նյութերը փոխանցել էր AEMRC-ին: Իսկ Հայոց ցեղասպանության վերաբերյալ նրա գրքերի հավաքածուն այժմ գտնվում է Հարավային Կալիֆոռնիայի համալսարանի Էդուարդ Լ. Դոհենի կրտսեր (Edward L. Doheny Jr.) անվան գրադարանում:

Զանազան դժվարություններ հաղթահարելուց հետո AEMRC-ն 2009-ին նախաձեռնեց թվայնացնել պրոֆ. Տատրյանի արխիվային պատմական նյութերը եւ մատչելի դարձնել դրանք ապագա սերունդների ուսումնասիրողների համար: Մինչեւ 2018 թվականը ընդհանուր 110 հազար էջերից 28 հազարը թվայնացվեցին եւ հասանելի դարձան այդ բնագավառի մասնագետներին: Որոշ ընդհատումից հետո, 2023-ին ստացված առատաձեռն նվիրատվության շնորհիվ հնարավոր եղավ շարունակել մնացյալ 80 հազար էջերի թվայնացման աշխատանքները: Կլարք համալսարանից դոկտ. **Աննա Ալեքսանյանը** ներառված է այդ աշխատանքներում, որոնք AGRP-ի հիմնադիր տնօրեն պրոֆ. **Թաներ Աքչամի** ղեկավարությամբ են առաջ տարվում:

Նախատեսված է ծրագիրը ավարտել 2025-ի դեկտեմբերին, որից հետո ամբողջ հավաքածուն հասանելի կլինի առցանց:

Այս գարնանը AGRP-ն վեբինար է կազմակերպելու ծրագրի մանրամասնությունները մասնագետներին ծանոթացնելու նպատակով:

Արարատ-Էսքիճյան թանգարանը, որը մշակութային եւ կրթական կենտրոն է միաժամանակ, հիմնվել է 1985-ին Ցեղասպանությունից մազապուրծ պարոն **Լութեր Էսքիճյանի** ջանքերով: Իսկ AGRP-ն իր գործունեությունն սկսել է 2022-ին, պրոֆ. Թաներ Աքչամի ջանքերով:

**Անգլ. բնագրից նյութը ներկայացրեց՝**

ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ
(The Armenian Mirror-Spectator)

# Կարեւորագույն բուհերը պետք է մնան քաղաքի կենտրոնում՝ իրենց պատմական շենքերում

Զգիտեմ անգրագիտության արդյունք է, դիտավորության, թե՞ լավագույն ավանդույթներ ունեցող կրթական օջախները վերացնելու ծրագրված քաղաքականության, բայց այն, որ բոլոր բուհերը որոշել են միավորել մեկ ակադեմիական քաղաքում, դա առնվազն ցնդաբանություն է: Դա ոչ միայն նշանակում է քաղաքային կյանքը վերացնել երիտասարդությունից, այլեւ՝ պատմական արմատներից:

Բերեմ Չեխիայի օրինակը: Պրահայի կենտրոնի գրեթե բոլոր պատմական շենքերը տրված են Կարլի համալսարանին եւ տարբեր ֆակուլտետներին, կինոյի ու թատրոնի ակադեմիային, Գիտությունների ակադեմիային, երաժշտական եւ արվեստների ինստիտուտներին, կոնսերվատորիային, որն ի դեպ գտնվում է Ֆիլհարմոնիայի հարեւանությամբ: Այս ամենն այսպես է, ոչ միայն որպեսզի երիտասարդությունն ավելի մոտ լինի մասնագիտական կառույցներին՝ թատրոններին, կինոսրահներին, համերգասրահներին, այլեւ այն պարզ պատճառով, որ քաղաքի բոլոր ծայրերից հարմարավետ է կենտրոն գալը: Այս քաղաքականությունը պատահական չէ, քանի որ այսպիսով պատմական կենտրոնը նաեւ մշտապես գտնվում է պետության ուշադրության կենտրոնում եւ որեւէ մասնավոր անձ կամ ընկերություն այդ շենքերը չի կարող քանդել կամ վերածել կազինոյի, հյուրանոցի կամ ռեստորանի:



Ընդ որում, առնվազն հինգից վեց բուհ պետք մնան իրենց պատմական շենքերում եւ իրենց ներկա կարգավիճակով՝ Երեւանի պետական համալսարանը, Երեւանի բժշկական համալսարանը, Կոմիտասի անվան կոնսերվատորիան, գեղարվեստի, կինոյի ու թատրոնի ինստիտուտները եւ մանկավարժական համալսարանը: Պրահայի բուն կենտրոնից ոչ այնքան հեռու են միայն Բարձրագույն տնտեսագիտական համալսարանն ու տեխնիկական համալսարանը, բայց երկուսն էլ մոտ են մետրոյի կայարաններին ու տրամվայների կանգառներին: Այսպես կոչված ակադեմիական փոքրիկ քաղաքի պատկերը կարելի է տեսնել Տեխնիկական համալսարանի տարբեր մասնաշենքերի մի թաղամասում լինելու առկայությամբ, որտեղ գտնվում է նաեւ ամենամեծ տեխնիկական գրադարանն՝ իր բոլոր հարմարություններով:

25 տարի է բնակվում եմ Հայաստանից դուրս եւ այս տարիներին շփվել եմ հաջողության հասած հայ բազմաթիվ երաժիշտների հետ, որոնք մշտապես շեշտել են, որ իրենց մասնագիտական հիմնական դասերը ստացել են Երեւանի կոնսերվատորիայում, որն այնպիսի հիմք է ապահովել նրանց համար, որ եվրոպացի հայտնի երաժիշտները զարմացել են: Նույնը վերաբերում է Երեւանի բժշկական համալսարանի շրջանավարտներին, ֆիզիկայի ու բնական գիտությունների, օտար լեզուների մասնագետներին:

Մի՛ խաթարեք արդեն տասնամյակներ շարունակ գործող լավագույն ավանդույթները: Կարող եք զարգացնել, կատարելագործել, վաս բարքերից ազատվել, բայց ոչ արմատահան անել: Ուշքի եկեք:

ՀԱԿՈԲ ԱՍԱՏՐՅԱՆ
Պրահա

# «Արցախ» բառը հանում են հնարավոր բոլոր տեղերից

Նիկոլ Փաշինյանի կաբինետն «Արցախ» բառի կիրառությունից հրաժարվում է հնարավոր ու անհնար բոլոր տեղերից:

«**Ազգ**»-ի տեղեկություններով, 2020-ից հետո Ադրբեջանի օկուպացրած Քաշաթաղի ու Քարվաճառի տեղահանված քաղաքացիներին՝ տուն կամ բնակարան ձեռք բերելու սերտիֆիկատը «թարմացրել» է:

«Մեր էլեկտրոնային փոստերին նամակ եկավ՝ կից սերտիֆիկատով, որտեղ «Արցախ Հանրապետություն»-ն ամեն տեղ փոխարինված էր «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն»-ով»,- ասաց «**Ազգ**»-ի զրուցակիցը»:

ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԼԳ տարի
Հրատարակիչ
**«ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ» սոցիալ-մշակութային հիմնադրամ**
Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48
**e-mail:** info@azg.am
azgdaily@gmail.com
**www.azg.am**
*Գլխաւոր խմբագիր*
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ
*Հաշվապահութիւն (գովազդ)*
հեռ. **010 582960**
*Համակարգչային շարուածքը՝*
«Ազգ» թերթի
"AZG" Weekly
Editor-in-chief H.AVEDIKIAN
Phone: 374 010 582960

# Լույս է տեսել

Լույս է տեսել Հայկական էներգետիկական ակադեմիայի հիմնադիր նախագահ, «Ազգ»-ի երկարամյա աշխատակից Ստեփան Պապիկյանի գրքույկը «Հայաստանի հիդրոէներգետիկան մինչեւ 1920 թվականը» խորագրով:

Հայաստանում 20-րդ դարի սկզբին շահագործվում էին 13 փոքր էլեկտրակայաններ՝ 3165 կՎտ գումարային հզորությամբ: 13 կայաններից 9-ը ջրային էին, աշխատում էին ջրի էներգիայի հաշվին, 4-ը՝ ջերմային (աշխատում էին ներքին այրման շարժիչներով): Տարեկան արտադրվում էր 5.1 միլիոն կՎտժ էլեկտրական էներգիա: Համեմատության համար նշենք, որ 20-րդ դարի սկզբին աշխարհում տարեկան արտադրվել է մոտ 15 միլիարդ կՎտժ էլեկտրական էներգիա: Էլեկտրակայաններ են շահագործվել նաեւ Կարս քաղաքում:

Հայաստանում առաջին հիդրոէլեկտրակայանը կառուցվել է 1903 թվականին Դիլիջանում: Աղստեւ գետից առբերվող ջրով պտտվող անիվը աշխատեցնում էր փայտասղոցարանի շրջանաձեւ սղոցը: Աղստեւ գետը Կուրի աջակողմյան վտակներից է: Նրա երկարությունը 133 կմ է: Սկիզբ է առնում Փամբակի լեռնաշղթայի Թեժլեռ գագաթի լանջերից:

Անիվի մեխանիկական էներգիան հաղորդելով 10կՎտ հզորություն եւ 230Վ լար-



ման հաստատուն հոսանքի գեներատորին՝ ստեղծել է առաջին պարզունակ հիդրոէլեկտրակայանը: Կայանի օգտակար ճնշումը 2 մետր էր: Էլեկտրական էներգիայի տարեկան արտադրությունը կազմում էր մինչեւ 10 հազար կՎտժ եւ օգտագործվում էր նաեւ լուսավորության համար:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Վահան Թեքեյան» սոցիալ-մշակութային հիմնադրամ», Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48, Երեւան 0001: Պետական գրանցման վկայականի համարը՝ 286.110.1041780, տրուած՝ 25.10.2018 թ.: Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 13.03.2024, գինը՝ 200 դրամ, տպագրում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: